ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ

4 (73)

ԵՐԵՎԱՆ

2016

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 4 (73), 2016

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների և Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի կառավարման ամբիոնների դասախոս, տ.գ.թ.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Էդուարդ Լ.Դանիելյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ.Կարապետյան
Տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.

Վահագն Ագլյան
«Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Աթոյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ վարչության նախագահ-գլխավոր տնօրեն, տ.գ.թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալներ
Վահագն Ագլյան
Վարդան Աթոյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Աննա Ժամակոչյան
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Վահրամ Հովյան
Տիգրան Ղանալանյան

Էջադրող-ձևավորող
Տաթևիկ Քարաուղլանյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 4 (73), 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Հրայր Փաշայան
Արցախի Հանրապետության արտաքին քաղաքականությունը 5

Հայկ Գաբրիելյան
Թուրքիայի «ռազմակայանային» քաղաքականության շուրջ 12

Հայկ Գաբրիելյան
Թուրքիայի արտաքին քաղաքականությունը …..... 25

Անուշավան Բարսեղյան
Ադրբեջանի արտաքին քաղաքականությունը …..... 34

Ջոնի Մելիքյան
Վրաստանի արտաքին քաղաքականությունը …..... 41

Ռոման Կարապետյան
Իրանի արտաքին քաղաքականությունը 46

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Դիանա Գալստյան, Մարիամ Խալաթյան
«Օտարերկրյա գործակալների մասին» օրենքի վերաբերյալ 51

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Արմեն Մանվելյան
Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքի էներգետիկ բաղկացուցիչը 58

Մհեր Սահակյան
Կորեական երկու մոդելները և ՀՀ-ն 65

Հուշագիր հեղինակին 69

Տարածաշրջան

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2016թ. մայիս

Հրայր Փաշայան*

Արցախի Հանրապետության արտաքին քաղաքական կյանքը մայիսին բավական ակտիվ էր՝ կապված Ղարաբաղյան հակամարտությանն առնչվող իրադարձությունների հետ: Այս ընթացքում շարունակվեցին ինչպես Հայաստանի Հանրապետության պետական և քաղաքական գործիչների, այնպես էլ եվրոպական գործընկերների այցելություններն Արցախ, նրանց հանդիպումները ԼՂՀ պաշտոնյաների հետ: ՀՀ ԱԺ պատգամավորներ Զարուհի Փոստանջյանի և Հրանտ Բագրատյանի օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացված «Արցախի Հանրապետությունը ճանաչելու մասին» օրենքի նախագիծը կրկին հայտնվեց ինչպես խորհրդարանի, այնպես էլ հանրային օրակարգում: Այս ընթացքում հայ հասարակության և միջազգային հանրության ուշադրության կենտրոնում էին հայտնվել մայիսի 16-ին Վիեննայում կայանալիք բարձրաստիճան հանդիպումները՝ նվիրված Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման հարցերին: Քառօրյա պատերազմի հետ կապված՝ Արցախը մայիսին շարունակում էր մնալ արտերկրի տարբեր քաղաքական գործիչների և լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում:

Հայաստան – Արցախ. Ակտիվ քաղաքական գործընթացներ տեղի ունեցան ՀՀ-ԼՂՀ հարաբերություններում: Մայիսի 7-ին կայացավ ՀՀ և ԼՂՀ խորհրդարանների արտաքին հարաբերությունների և պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովների համատեղ դռնփակ նիստը՝ «Ապրիլյան պատերազմի հետևանքով ստեղծված ռազմաքաղաքական իրադրությունը և դրանից բխող գործողությունները» թեմայով: Նիստի ընթացքում բանախոսությամբ հանդես եկան «Կովկասի ինստիտու-

* Արցախի պետական համալսարանի փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս, քաղաքական գիտությունների թեկնածու:

տի» փոխտնօրեն Սերգեյ Մինասյանը («Ռազմական իրադրություն. մարտահրավերներ, խնդիրներ և զարգացումներ»), Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության կենտրոնի տնօրեն Ստեփան Գրիգորյանը և Արտաքին քաղաքականության ու անվտանգության հարցերով հանրային խորհրդի ղեկավար Մասիս Մայիլյանը («ԼՂ հիմնախնդրի շուրջ առկա արտաքին քաղաքական միջավայրը. մարտահրավերներ և հնարավոր զարգացումներ»): Տեղի ունեցավ մտքերի փոխանակում, որի ընթացքում փորձագետները պարզաբանումներ տվեցին պատգամավորների հարցերին: Օրվա երկրորդ կեսին նիստը շարունակվեց ՀՀ և ԼՂՀ պատգամավորների ելույթներով: Խորհրդարանականները ներկայացրին մի շարք առաջարկություններ ԼՂՀ-ի և ՀՀ-ի համար արտաքին և պաշտպանական ու անվտանգային ոլորտների ռազմավարական մի շարք ուղղությունների վերաբերյալ: Ամփոփելով նիստը՝ ԼՂՀ ԱԺ նախագահը գոհունակություն հայտնեց հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ՝ նշելով, որ քննարկումների արդյունքում հավաքագրված տեղեկատվությունը փորձագետների և քաղաքական գործիչների համար ճիշտ եզրահանգումների և լուրջ ուսումնասիրությունների նյութ կդառնա:

Մայիսի սկզբին «Արցախի Հանրապետությունը ճանաչելու մասին» օրենսդրական նախաձեռնությամբ հանդես եկան Ազգային ժողովի պատգամավորներ Զարուհի Փոստանջյանը և Հրանտ Բագրատյանը: Որպես հիմնավորում նշվում է, որ «Արցախի Հանրապետությունը ճանաչելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունմամբ ՀՀ-ի կողմից իրավամբ կճանաչվի Արցախի փաստացի կարգավիճակը՝ ելնելով նրանից, որ Արցախի Հանրապետությունը բավարարում է ինքնիշխան պետության համար միջազգային օրենքի բոլոր նախապայմաններին: Եվ օրենքը հիմք կհանդիսանա Հայաստանի և Արցախի հանրապետությունների՝ Արցախի Հանրապետության պաշտոնական ճանաչումից ծագող հարաբերությունները կարգավորելու, ԼՂՀ անվտանգությունն ապահովելու և ամրապնդելու գործում ՀՀ իրավունքներն ու պարտականությունները որոշակիացնելու, Հայաստանի ազգային շահն ու պետական քաղաքականությունը սահմանելու համար:

Կառավարությունը մայիսի 5-ի նիստում հավանություն տվեց օրինագծի վերաբերյալ կառավարության եզրակացության նախագծին: «Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագծի ընդունումը պայմանավորում է Հայաստանի և Արցախի միջև քննարկումների

արդյունքներով՝ հաշվի առնելով հետագա զարգացումները, այդ թվում նաև արտաքին գործոնները: Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագիծը ՀՀ Ազգային ժողովում քննարկելիս հարակից զեկուցմամբ հանդես կգա արտաքին գործերի նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանը»:

Ազգային ժողովի Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նիստում Արցախի Հանրապետությունը ճանաչելու մասին օրինագիծը դրական եզրակացություն չստացավ: «ԼՂՀ-ն արդեն իսկ կայացած պետություն է, ինչը փաստ է, սակայն, դրա ժամանակը չէ: Պետք չէ միակողմանի քայլեր անել՝ անհարմար վիճակում դնելով գործընկերներին»,- ասաց Արտակ Զաքարյանը: Կառավարության ներկայացուցիչ, ԱԳ փոխնախարար Շավարշ Քոչարյանը հայտարարեց, որ կառավարությունը հաստատել է օրինագծին կից ներկայացված կառավարության եզրակացությունը, ինչը չի նշանակում, թե հաստատել է պատգամավորների օրինագիծը: Պաշտոնյայի խոսքով՝ կառավարության դիրքորոշումն այն է, որ այս պահին նպատակահարմար չէ ճանաչել Արցախի անկախությունը, քանզի այն կարող է վտանգել բանակցային գործընթացը: Մինչ քվեարկությունը՝ մայիսի 16-ին, ԱԺ նիստերի դահլիճում ելույթ ունեցան խորհրդարանում ներկայացված բոլոր քաղաքական ուժերն ու անհատ պատգամավորներ: Հնչեցին իրարամերժ կարծիքներ, և քվեարկության արդյունքում 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ հարաբերակցությամբ Արցախի Հանրապետությունը ճանաչելու մասին օրինագիծը չընդգրկվեց 5-րդ գումարման 9-րդ նստաշրջանի օրակարգ:

ՀՀ-ի և ԼՂՀ-ի միջև կապերի ամրապնդման և երկու երկրների հասարակական-քաղաքական կյանքին առնչվող կարևորագույն իրադարձություններից մեկը կապված էր Հայաստանի Հանրապետական կուսակցության նախաձեռնությամբ մայիսի 21-22-ը Ստեփանակերտում կայացած Հայկական քաղաքական կուսակցությունների 2-րդ ֆորումի հետ: Ազգային ժողովի նիստերի դահլիճում Հայաստանի Հանրապետության 10 և Արցախի Հանրապետության 5 խորհրդարանական կուսակցությունների մասնակցությամբ անցկացվեց երկու նիստ: Առաջինն ընթացավ «Հայկական կուսակցությունների զարգացման հեռանկարները» թեմայի քննարկմամբ, որի ընթացքում նշվեցին Հայաստանում բազմակուսակցական համակարգի կայացման հետ կապված խնդիրներն ու սահմանադրական փոփոխություններն այդ ուղղությամբ օգ-

տագործելու հնարավորությունները: Երկրորդ նիստը նվիրված էր արցախյան հիմնախնդրին և արտաքին քաղաքականության մեջ կուսակցությունների դերին: Շեշտվել է, որ միջազգային հարթակներում կուսակցական խողովակները կարող են շատ ավելի արդյունավետ լինել, քան զսպված դիվանագիտությանը: Հատկապես անելիքներ շատ կան ՀՀ քաղաքական կուսակցությունների գործունեության մեջ, որոնք պետք է յուրօրինակ խոսափող դառնան Արցախի ձայնն արտաքին աշխարհում ներկայացնելու համար: Ելույթներով հանդես եկան Արցախի և Հայաստանի մի շարք քաղաքական ուժերի ներկայացուցիչներ: Կարծիքը մեկն էր. միասնական ջանքերի համադրումով միայն կկարողանանք իսկապես արմատական փոփոխություններ իրականացնել և հասնել երկու հայկական պետականությունների կայացմանը, այդ դեպքում արժանիորեն հարգած կլինենք այն երիտասարդների հիշատակը, ովքեր իրենց կյանքը զոհեցին երկու հայկական պետությունների պաշտպանության համար:

Ղարաբաղյան հակամարտություն. ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների մայիսի 12-ին տարածած հայտարարությունը, որ Հայաստանի և Ադրբեջանի նախագահները կարող են հաջորդ շաբաթ հանդիպել Վիեննայում, միջազգային հանրության և փորձագիտական շրջանակների ուշադրությունը կրկին սևեռեց Ղարաբաղյան հակամարտության վրա: Մայիսի 16-ին Վիեննայում, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների՝ ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի, ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերիի և Ֆրանսիայի եվրոպական գործերով պետքարտուղար Հարլեմ Դեզիրի և համանախագահների եռյակի մասնակցությամբ կայացավ Սարգսյան-Ալիև հանդիպումը: Հանդիպման արդյունքներով Մինսկի խումբը հրապարակեց հայտարարություն, որում, նախ՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրները հաստատել են 1994 և 1995թթ. հրադադարի ռեժիմի ամրապնդման մասին համաձայնությունների կատարման անհրաժեշտությունը, որոնք ձեռք են բերվել հակամարտության բոլոր երեք կողմերի՝ Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի մասնակցությամբ: Դրանով փաստորեն տապալվեցին Ադրբեջանի վաղուց ձեռնարկվող փորձերը հիշյալ համաձայնությունների չեղարկման և Երևանի ու Բաքվի միջև երկկողմ նոր համաձայնության կնքման համար, բնականաբար՝ ադրբեջանական կողմի համար նպաստավոր

հետևություններով: Հայտարարությունից տրամաբանորեն հետևում է այն եզրահանգումը, որ Լեռնային Ղարաբաղը, հակառակ Բաքվի ցանկության, որպես հակամարտության լիիրավ կողմ, պետք է մասնակցի բանակցային գործընթացին: Ավելի ուշ այս մասին հայտարարեց ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուս համանախագահը: «Իրոք, այս փուլում ղարաբաղցիները բանակցություններին ձևականորեն չեն մասնակցում: Սակայն այդ թեմային մեծ ուշադրություն է հատկացվում համանախագահների հանդիպման ընթացքում և՛ Հայաստանում, և՛ Ադրբեջանում, և՛ հենց Լեռնային Ղարաբաղում: Ենթադրում եմ, թե որոշակի փուլում, օրինակ՝ շրջանակային համաձայնության ձեռքբերումից հետո, ղարաբաղցիները պետք է վերադառնան բանակցությունների սեղանի մոտ: Չէ՞ որ խոսքն այն մարդկանց մասին է, որոնք պետք է ապրեն այնտեղ»,- հայտնել է Իգոր Պոպովը: Երկրորդ կարևոր շեշտադրումն առնչվում է ռազմական գործողությունների վերսկսման անթույլատրելիությանն ու հրադադարի ռեժիմի ամրապնդմանն ու պահպանմանը: Հանդիպմանը ձեռք բերված այս պայմանավորվածությունների իրականացման դեպքում, իրոք, հնարավոր կլինի վերջ դնել իրավիճակի՝ դեռևս շարունակվող ռազմական սրացմանը և վերականգնել բանակցային գործընթացը, որին Ադրբեջանի կողմից շոշափելի հարված է հասցվել: Վիեննայի հանդիպման մեկ այլ կարևոր հանգամանք է շփման գծում միջադեպերի հետաքննության մեխանիզմի մշակման և ներդրման վերաբերյալ պայմանավորվածությունը: Ինչպես հայտնի է, և՛ Հայաստանը, և՛ Լեռնային Ղարաբաղը միջնորդների տվյալ նախաձեռնությանը սատարել էին, ու միայն Ադրբեջանն էր մշտապես խոչընդոտում դրա կենսագործմանը, ինչը նրան թույլ էր տալիս անպատիժ խախտել հրադադարի ռեժիմը: Ըստ երևույթին, Վիեննայում Ի.Ալիևը Մինսկի խմբի համանախագահ երկրների գործադրած ճնշման արդյունքում համաձայնեց նույն այդ մեխանիզմի ներդրմանը, որը Բաքվի մեղքով տարիներ շարունակ տապալվում է: Հակամարտության գոտում դիտորդական առաքելության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նաև պայմանավորվածություն ձեռք բերվեց ընդլայնելու ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակը, ինչը թույլ կտա կատարելագործել շփման գծում իրավիճակի դիտարկման ներկայումս գործող մեխանիզմը: Սակայն, հաշվի առնելով պայմանավորվածությունները խախտելու Ադրբեջանի ղեկավարության գործելաոճը, և արդեն այդ ուղղությամբ Բաքվում հնչեցված հակասական մեկնաբա-

նությունները, Վիեննայի հանդիպման արդյունքներին հարկ է մոտենալ զգուշավոր լավատեսությամբ: Ենթադրելի է, որ Բաքուն այս անգամ ևս տարբեր պատրվակներով կխուսափի պայմանավորվածությունները կատարելուց և կշարունակի հիմնախնդրի ուժային լուծմանը միտված իր ապակառուցողական քաղաքականությունը: Հետևաբար, նորից արդիական է դառնում «խաղաղություն ես ուզում՝ պատրաստ եղիր պատերազմի» դարավոր ճշմարտությունը:

ԼՂՀ – Սփյուռք. Մայիսին Արցախը շարունակեց գտնվել համայն հայության ուշադրության և հոգածության կենտրոնում: Սփյուռքի տարբեր գործիչներ, այցելելով ԼՂՀ, իրենց նյութական, բարոյական և քաղաքական աջակցությունն էին հայտնում այս կարևորագույն համազգային խնդրի լուծմանը: ԼՂՀ նախագահը մայիսի 5-ին ընդունեց Հայ Առաքելական եկեղեցու Թեհրանի թեմի առաջնորդ Սեպուհ արքեպիսկոպոս Սարգսյանին, մայիսի 23-ին՝ Ամերիկայի Հայկական համագումարի հոգաբարձուների խորհրդի նախագահ Վան Կրիկորյանին: Հանդիպմանն արծարծվել են հետևյալ հարցերը. պետություն-եկեղեցի, Արցախի ներքին և արտաքին քաղաքականություն, Հայրենիք-Սփյուռք կապեր, Ադրբեջանի ագրեսիայի հետևանքներ և տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումներ և այլն:

Արցախ-Սփյուռք հարաբերությունների համատեքստում առավել նշանակալիցը ՀՅԴ Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների խորհրդաժողովի աշխատանքների շարունակումն էր Արցախում: Մայիսի 9-ին ԼՂՀ Ազգային ժողովի նիստերի դահլիճում գումարվեց երկրորդ նիստը: Ներկա էին օրենսդիր ու գործադիր իշխանության, քաղաքական ու հանրային շրջանակների ներկայացուցիչներ: Ինչպես 25 տարի առաջ, այնպես էլ ապրիլյան օրերին հայության ներուժը կենտրոնացավ Արցախում՝ ծառայելով ազգային շահերին: ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար, ՀՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Դ.Իշխանյանի խոսքով՝ Հայ դատի ուղղությամբ տարվող աշխատանքների հաջողության բանալին Արցախի սահմաններում է և ամփոփված է հայ զինվորի ոգու մեջ: Այստեղից կարող են ուժ ստանալ բոլոր քաղաքական ու պետական գործիչները, այստեղ կարող են նաև սրբագրվել բոլոր այն գաղափարները, որոնք ծնունդ են առնում յուրաքանչյուր հայի մեջ: Բացման խոսք ասաց ՀՅԴ Հայ դատի Կենտրոնական խորհրդի նախագահ Հակոբ Տեր-Խաչատրյանը՝ կառույցի ընդհանուր աշխատանքներն ամփոփելով չորս կետերի մեջ: Առաջին. Արցախին առնչվող աշ-

խատանքները, որոնք տարվում են ամբողջ աշխարհում՝ ինքնորոշման իրավունքի շեշտադրումով, գումարած Ադրբեջանի հակահայկական քարոզչության դեմ պայքարը: Քառօրյա պատերազմից հետո այդ ուղղությամբ ավելի մեծ թափով ծավալվեցին աշխատանքները. ազգը մեկ բռունցք դարձավ, և այդպես էլ պիտի լիներ: Երկրորդ կետում նա նշեց Հայաստանի հետ կապված աշխատանքներն աշխարհում՝ նրա միջազգային վարկանիշը բարձր պահելու ուղղությամբ, նաև պայքարը միջազգային ատյաններում և այլ երկրներում թուրք-ադրբեջանական հարձակումների դեմ: Երրորդ՝ նոր էջի բացում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում, այն է՝ պահանջատիրություն, որի կարևորագույն հանգրվանն Արցախն է: Չորրորդ՝ Հայ դատի քաղաքական ուժի հզորացում աշխարհով մեկ, և հատկապես Սփյուռքում հայ երիտասարդության քաղաքական գործունեության ակտիվացում: Իր զեկույցում ԼՂՀ արտգործնախարարը խոսեց արտաքին քաղաքականության ճակատում Արցախին ուղղված մարտահրավերների մասին: Կ.Միրզոյանի խոսքով՝ չորսօրյա պատերազմը նոր մարտահրավեր էր, որը նոր խնդիրների և դժվարությունների հետ մեկտեղ բերեց նաև նոր հնարավորություններ ու հորիզոններ, ինչի վրա պետք է կենտրոնացնել ընդհանուր ջանքերը: Դիրքորոշումների վերանայման, նոր մարտավարությունների մշակման և դրանց կիրառման խնդիր է առաջացել, ասաց նա: Հակամարտության կարգավորման առնչությամբ մեր դիրքորոշումն անսասան է. Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը պետք է հարգվի, վերադարձ անցյալին թե՛ կարգավիճակի և թե՛ տարածքների առումով անհնար է: Կ.Միրզոյանն այնուհետև ընդգծեց բանակցային գործընթացի բոլոր փուլերին արցախյան կողմի լիարժեք մասնակցության անխուսափելիությունը, առանց որի հնարավոր չէ հասնել խաղաղ կարգավորման: Միաժամանակ, անհրաժեշտ է շարունակել աշխատանքները ԼՂՀ միջազգային ճանաչման ուղղությամբ: Ճանաչումը պարունակում է Արցախի համար կարևոր մի շարք գործոններ: Այն անվտանգության հզոր երաշխիք կլինի Արցախի և նրա բնակչության համար և թույլ կտա օգտագործել միջազգային անվտանգության այն մեխանիզմները, որոնցից օգտվում են միջազգայնորեն ճանաչված բոլոր պետությունները:

ԹՈՒՐՔԻԱՅԻ «ՌԱԶՄԱԿԱՅԱՆԱՅԻՆ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Հայկ Գաբրիելյան[*]

Կատար. 2014թ. դեկտեմբերին Անկարա այցելեց Կատարի էմիր, շեյխ Թամիմ բին Համադ Ալ Թանին, որին ընդունեց Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդոդանը: Այցի արդյունքներով որոշվեց էլ ավելի զարգացնել ռազմական ոլորտում երկու երկրների միջև համագործակցությունը: Համապատասխան համաձայնագիրը, որը, ռազմական ուսուցումից ու պաշտպանական արդյունաբերության ոլորտում համագործակցելուց բացի, նախատեսում էր նաև Կատարում թուրքական ռազմակայանի ստեղծում, Անկարայում ստորագրվեց 2014թ. դեկտեմբերի 19-ին: Այն Թուրքիայում վավերացվեց 2015թ. մարտի 19-ին և Պաշտոնաթերթում (*Resmi Gazete*) հրապարակվեց 2015թ. հունիսի 8-ին:

2015թ. հոկտեմբերի 17-29-ին Կատարում անցկացվեցին Թուրքիայի հետ համատեղ *Nasr* զորավարժությունները: Դրանց մասնակցելու նպատակով Կատարում գտնված 100 թուրք զինվորականները հետ չվերադարձան այնտեղից, և այդպիսով Կատարում սկսեցին գործել թուրքական ռազմական առաջին տարրերը: Դրանով իսկ թուրք զինվորականներն ուղիղ մեկ դար անց վերադարձան Կատար (օսմանյան զինվորները Կատարը լքել են 1915թ.)[1]:

2015թ. դեկտեմբերին Կատարում Թուրքիայի դեսպան Ահմեթ Դեմիրոկը հայտարարեց, որ Կատարում ստեղծվելիք թուրքական բազմանշանակ ռազմակայանում տեղակայվելու է մոտ 3000 զինծառայող, որոնք կներկայացնեն Թուրքիայի ցամաքային, ռազմաօդային ու ռազմածովային ուժերը, ինչպես նաև հատուկ նշանակության ուժերն ու հրահանգիչները[2]:

2016թ. ապրիլի 27-28-ին վարչապետի կարգավիճակով առաջին անգամ Կատար այցելած Թուրքիայի վարչապետ Ահմեթ Դավութօղլուն, որն արտգործնախարարի կարգավիճակով 15 անգամ այցելել էր Կատար, հայտարարեց, որ ստորագրված նոր համաձայնագրի համաձայն՝ Կատարում սկսել է

[*] Թուրքագետ:

[1] Ece Göksedef, Basra'dan sonra Aden, Al Jazeera Turk, 18.01.2016, Katar'da 100 yıl sonra Türk askeri, Star, 20.06.2015.

[2] “Katar’a askeri üs kuracağız”, Sözcü, 16.12.2015.

գործել թուրքական բազմանշանակ ռազմակայանը, ինչը նա որակեց որպես Թուրքիայի կողմից 100 տարի անց Պարսից ծոցի հանդեպ գործած վիթխարի քայլ: Կատարում թուրքական ռազմակայանը հիմնվում է 10 տարի ժամկետով, ինչը կողմերի չառարկելու դեպքում կարող է երկարաձգվել[3]: Կատարի ռազմակայանը Մերձավոր Արևելքում Թուրքիայի առաջին ռազմակայանն է, որի ստեղծման պատճառները կարելի է բաժանել երկու խմբի՝ տնտեսական և աշխարհաքաղաքական-ռազմական:

Տնտեսական. Վերջին շրջանում Կատարը Թուրքիայի համար տնտեսական առումով ավելի ու ավելի է կարևորվում: 2015թ. դեկտեմբերի 2-ին Դոհայում անցկացվեց Թուրք-կատարյան բարձր մակարդակի ռազմավարական համագործակցության խորհրդի (*YDSK*) առաջին նիստը, որի արդյունքներով ստորագրվեց 15 համաձայնագիր (Թուրքիան 2006-ից *YDSK* է հիմնել 21 երկրի հետ): 2016թ. ապրիլի վերջին Դավութօղլուն Կատարում մասնակցեց Թուրք-կատարյան գործարար ֆորումին, որտեղ նշեց, որ վերջին 5 տարում 3 անգամ աճել է ապրանքաշրջանառության ծավալը՝ հասնելով $1.3 մլրդ-ի, ինչն էլ պետք է հասցվի նախ 3, ապա՝ $5 մլրդ-ի. «Թուրքիան և Կատարը նպատակադրվել են ստորագրել ազատ առևտրի գոտու մասին համաձայնագիր: Երկու երկրների տնտեսություններն ունակ են լրացնել միմյանց. այն, ինչ չկա Կատարում, կա Թուրքիայում և ընդհակառակը»: Դավութօղլուն օգտակար համարեց 2022թ. Կատարում կայանալիք ֆուտբոլի Աշխարհի առաջնության ենթակառուցվածքների կառուցման հարցում թուրքական կապալառու ընկերությունների ունեցած փորձը և կարևորեց Կատարի կողմից Թուրքիայում ներդրումներ անելը, զբոսաշրջիկների հոսքի մեծացումը և հեղուկացված գազի հարցում Կատարի ունեցած պոտենցիալը[4]:

Հիշեցնենք, որ Կատարն իր գազային պաշարներով աշխարհում զբաղեցնում է 3-րդ տեղը, նրա տարածքին է բաժին ընկնում աշխարհի բնական գազի պաշարների 14%-ը: Բացի այդ, Կատարը հեղուկացված գազի արտահանմամբ զբաղեցնում է 1-ին տեղն աշխարհում: 2015թ. դեկտեմբերին անցկացված *YDSK*-ի նիստի շրջանակներում հուշագիր ստորագրվեց թուրքական *BOTAŞ* պետական խողովակաշարային ընկերության և Կատարի ազգային նավթային ընկերության միջև, որն առնչվում էր երկարաժամկետ հենքով Կա-

[3] Katar'da ortak askeri üs için imzalar atıldı, Akşam, 28.04.2016.

[4] Davutoğlu: Türkiye ile Katar arasındaki ticaret hacmi 5 milyar dolara çıkmalı, Cihan, 28.04.2016.

տարից Թուրքիա հեղուկացված գազի մատակարարումներին (ավելի վաղ Թուրքիան Կատարից հեղուկացված գազ ներկրել է միայն կարճաժամկետ համաձայնագրերով)։ Այժմ Թուրքիան Կատարից ներկրելու է տարեկան 1.2 մլրդ մ^3 հեղուկացված գազ[5]։ Դրանից հետո Թուրքիայում Կատարի դեսպան Ալ Շաֆին հայտարարեց, որ Կատարը պատրաստ է ապահովել հեղուկացված գազի հարցում Թուրքիայի պահանջարկը և նրան մատակարարել անհրաժեշտ ծավալի գազ[6]։

Այդպիսով Կատարը դառնում է Թուրքիայի վեցերորդ հիմնական գազամատակարարը (Թուրքիան խողովակաշարերով գազ է ներկրում Ռուսաստանից, Իրանից և Ադրբեջանից, ինչպես նաև հեղուկացված գազ է ներկրում Ալժիրից և Նիգերիայից)։ Տեսականորեն չի բացառվում, որ Կատարից գազատար կառուցվի դեպի Թուրքիա, որով այն կարող է հայտնվել Եվրոպայում։ Թուրքիայի կողմից Կատարում ռազմակայան հիմնելը կարող է նաև ուղերձ հանդիսանալ Իրանին, որը ներկայումս իր գազը Եվրոպա արտահանելու ուղիների փնտրտուքների մեջ է։ Ընդ որում՝ Իրանն այդ հարցում տատանվում է, մի կողմից՝ խողովակաշարերով ու լցանավերով գազը Եվրոպա հասցնելու միջև, մյուս կողմից էլ խողովակաշարային տարբերակն ընտրելու դեպքում՝ տարբեր երթուղիների միջև (հիմնական երթուղիներից մեկը թուրքականն է)։ Ի դեպ, Կատարն ու Իրանը համատեղ շահագործում են Հարավային Փարս գազային հանքավայրը, որը խոշորագույնն է աշխարհում։ Բացի այդ, պետք է հաշվի առնել Հորմուզի նեղուցին Կատարի մոտ գտնվելու գործոնը, որով օրական փոխադրվում է 17 մլն բարել նավթ։

Աշխարհաքաղաքական-ռազմական. Կատարը զգում է ռազմական ոլորտում Թուրքիայի հետ կապերի զարգացման կարիք, Թուրքիան էլ կարևորում է Կատարում իր զորքերի ներկայությունը՝ Պարսից ծոցի տարածաշրջանում իր աշխարհաքաղաքական շահերի հաստատման համար։ Թուրքիայի կողմից Կատարում ռազմակայան հիմնելը տեղավորվում է Թուրքիայի նեոօսմանյան քաղաքականության (Կատարում թուրքական ռազմակայանի բացումը գրեթե ամբողջովին համընկավ Կուտ էլ Ամարայի ճակատամարտում բրիտանական զորքերի դեմ օսմանյան զորքերի հաղթանակի 100-ամյակին՝ 29.04.1916) և տարածաշրջանում Իրանի հետ նրա կատաղի մրցակցության շրջանակներում։

[5] Katar'la doğalgaz anlaşması imzalandı, vizeler kaldırıldı, Milliyet, 02.12.2015.
[6] Katar'dan Türkiye'ye sınırsız doğalgaz müjdesi!, Haber7, 17.12.2015.

Այդպիսով, Թուրքիան վերածվում է այն երկրներից մեկի, որոնք անմիջականորեն կարգավորում են Պարսից ծոցի տարածաշրջանի անվտանգության համակարգի մեխանիզմները, ընդ որում՝ Թուրքիան այդ առաքելությունն իրականացնելու է ՆԱՏՕ և ՄԱԿ շրջանակներից դուրս: 2015թ. վերջին Դեմիրոկը հայտարարել էր. «Թուրքիան և Կատարը բախվում են ընդհանուր խնդիրների: Մեր երկու երկրները մտահոգ են տարածաշրջանի դեպքերից և մյուս երկրների ոչ պարզ քաղաքականությունից: Մենք դիմակայում ենք ընդհանուր թշնամիներին: Մերձավոր Արևելքի համար նման անհանգիստ ժամանակներում մեր համագործակցությունն անհրաժեշտ է»: Ակնհայտ է, որ թուրք դեսպանը «ընդհանուր թշնամիներ» ասելով առաջին հերթին նկատի ունի շիա Իրանն ու նրա տարածաշրջանային դաշնակիցներին: Թուրքիան և Կատարը նմանատիպ քաղաքականություն են վարում Մերձավոր Արևելքում. Եգիպտոսում աջակցել են «Մուսուլման եղբայրներին», ձգտում են հասնել Սիրիայի նախագահ Բաշար Ասադի վարչակարգի տապալմանը, տարածաշրջանում, այդ թվում նաև Եմենում, Իրանի ազդեցությունը զսպելուն, աջակցում են տարածաշրջանի ահաբեկչական խմբավորումներին:

Թուրքիայում ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցության (ԺՀԿ) պատգամավոր Այթուգ Աթըջըն չի բացառել նաև, որ թուրք զինվորականները Կատարում ռազմական ուսուցում կտան սիրիացի ընդդիմադիրներին (ռազմակայանը ծառայելու է որպես համատեղ զորավարժությունների անցկացման վայր): Ֆինանսական տեսանկյունից հարուստ Կատարը նաև դիտարկվում է որպես թուրքական արտադրության զենքի պոտենցիալ գնորդ:

Կատարում թուրքական ռազմակայանը կարևորվում է նաև Թուրքիա-Կատար-Սաուդյան Արաբիա սուննի դաշինքի համար: Երեք երկրներն էլ խստապես մտահոգված են 2016թ. հունվարին Իրանի դեմ պատժամիջոցների վերացումից՝ գտնելով, որ դա ազատ է արձակում Իրանի ձեռքերն ու հանգեցնելու է տարածաշրջանում նրա ակտիվացմանը: Պետք է նկատել, որ Կատարի հյուսիսում է գտնվում հիմնականում շիաբնակ Բահրեյնը, և անհրաժեշտության դեպքում թուրք զինվորականները կկարողանան արագ արձագանքել այնտեղ Իրանի հնարավոր ակտիվացմանը:

Եվ ընդհանրապես, կարելի է ասել, որ իր աշխարհագրական դիրքով Կատարը (Պարսից ծոց) նման է Ղրիմի թերակղզուն (Սև ծով)՝ ունենալով ռազմավարական, գերակա դիրք: Պարսից ծոցում թուրքական նավատորմի հայտնվելը չի

կարող դժգոհություն չառաջացնել Իրանում, որը շարունակ հիշեցնում է իր բացառիկությունը, որ ունի Պարսից ծոցում ամենաերկար ափագիծը, որ իր համար ռազմավարական մեծ կարևորություն ունեն Պարսից ծոցը, Հորմուզի նեղուցը, Օմանի ծովածոցը: Իրանը քանիցս սպառնացել է փակել Հորմուզի նեղուցը, «չարիք» է որակել ամերիկյան (նաև բրիտանական ու ֆրանսիական) նավատորմի առկայությունը Պարսից ծոցում: Իրանը Պարսից ծոցում ռազմական նավատորմ ունեցող երկրներից պահանջում է նավերում ունենալ պարսկերենին տիրապետող անձ: Դա ի ցույց է դնում այն, որ Իրանը Պարսից ծոցում օտար երկրների ռազմական ներկայությանը ցավագին է արձագանքում: Ապագայում Պարսից ծոցում հնարավոր են միջադեպեր թուրքական և իրանական նավերի միջև:

Պետք է նաև նկատի ունենալ, որ Պարսից ծոցի տարածաշրջանի կարևորությունն էլ ավելի կաճի, եթե իրագործվի Կասպից ծով-Պարսից ծոց ջրանցքը, որի առաջարկով հանդես է եկել Ռուսաստանը, որն այդպիսով կարող է կարճ ճանապարհով դուրս գալ Հնդկական օվկիանոս և զգալիորեն նվազեցնել Սևծովյան նեղուցներից (Թուրքիայից) իր կախվածությունը: Թուրքիայում արդեն իսկ մեկնարկել է Ստամբուլի ջրանցքի կառուցումը, ինչը մեծապես կիմաստազրկվի Կասպից ծով-Պարսից ծոց ջրանցքի կառուցման դեպքում՝ Ռուսաստանին, Կասպյան տարածաշրջանի երկրների համար առավել կարճ ուղի ապահովելով: Իր չափերով Ստամբուլի ջրանցքը զիջելու է Բոսֆորի նեղուցին, որը համարվում է միջազգային ջրուղի, մինչդեռ Ստամբուլի ջրանցքը գտնվելու է բացառապես Թուրքիայի ինքնիշխանության ներքո: Այն, որ «իրանական Սուեզի ջրանցքը» կդառնա Ստամբուլի ջրանցքի այլընտրանքը, նշել է նաև թուրք հոդվածագիր Սուլեյման Յաշարը, որն անգամ չի բացառել, որ կառուցման դեպքում Կասպից ծով-Պարսից ծոց ջրանցքը կարող է միացվել նաև Վանա լճին[7]:

Ի դեպ, 2011թ. Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանի կողմից Ստամբուլի ջրանցքի նախագծի մասին բարձրաձայնելուց հետո Թուրքիայի տրանսպորտի, կապի և նավագնացության փոխնախարար Համզա Թաշքեսերը հանդես եկավ նման խոշոր նախագծով՝ առաջարկելով Եփրատ գետը վերածել առևտրի ու զբոսաշրջության ուղու՝ ընդգծելով, որ Եփրատը Թուրքիային ապահովում է կարճ ուղի դեպի Պարսից ծոց: Խոսքը Բիրեջիք (Շանլըուրֆա նահանգ) - Բասրա երթուղով բեռնափոխադրումներ իրականացնելու մասին

[7] Süleyman Yaşar, İran, Kanal İstanbul'un alternatifini yapıyor, Taraf, 13.04.2016.

է (Եփրատ գետը Բիրեջիքի շրջանից մուտք է գործում Սիրիա): Նա հիշեցրել էր, որ Միջերկրական ծովով, Սուեզի ջրանցքով, Կարմիր ծովով Պարսից ծոց հասնելու համար պետք է հաղթահարել 5700 կմ, մինչդեռ Եփրատ գետի պարագայում դա կազմում է 1700 կմ: Թաշքեսերը խնդիր չէր համարել Եփրատի վրա Սիրիայում և Իրաքում առկա ամբարտակներն ու հէկերը, քանի որ կան նավերի կողմից դրանք շրջանցելու ժամանակակից մեխանիզմներ[8]: Եվ չնայած ներկայումս Սիրիայում և Իրաքում պատերազմական իրավիճակ է և խստապես սրված են Սիրիայի ու Իրաքի հետ Թուրքիայի հարաբերությունները, այնուամենայնիվ, չպետք է բացառել, որ ժամանակին կիրագործվի այս նախագիծը, որով և Պարսից ծոցն էլ ավելի կկարևորվի Թուրքիայի համար:

Սոմալի. 2016թ. հունվարին Թուրքիայի ԱԳՆ՝ Սոմալիի հարցերով դեպարտամենտի ղեկավար Էմիլ Թեքինը հայտարարեց, որ Թուրքիան սկսել է ռազմակայան կառուցել Սոմալիի մայրաքաղաք Մոգադիշոյում՝ սոմալեցի զինվորականներին ռազմական ուսուցում տալու համար: Թեքինն ընդգծել էր, որ այդ ռազմաուսումնական կենտրոնը ծառայելու է նաև որպես կարևոր հիմք, որպեսզի ռազմական պատրաստություն ապահովի ողջ Աֆրիկային[9]: Ծրագրված է, որ առաջին փուլում 200 թուրք ռազմական հրահանգիչները պետք է պատրաստեն և ուսուցում տան 10.500 սոմալեցի զինվորականների ու ոստիկանների՝ իսլամական «Աշ-Շաբաբ» արմատական խմբավորման դեմ պայքարի համար, որը սերտ կապեր ունի «Ալ-Քաիդա» ահաբեկչական խմբավորման հետ: Ակնկալվում է, որ Սոմալիում թուրքական ուսումնական կենտրոնը կբացվի մինչև ամռան ավարտ[10]: 2016թ. մայիսի 10-ին Պաշտոնաթերթում հրապարակվեց պաշտպանական արդյունաբերության ոլորտում համագործակցելու մասին 2015թ. հունվարի 25-ին Մոգադիշոյում Թուրքիայի և Սոմալիի միջև ստորագրված համաձայնագիրը: Համաձայնագրով կողմերը պետք է համագործակցեն պաշտպանական արդյունաբերության ոլորտում, կատարեն համատեղ հետազոտություններ, ծավալեն համատեղ արտադրություն:

Հասկանալու համար, թե ինչու աֆրիկյան մայրցամաքում ռազմակայան հիմնելու Թուրքիայի ընտրությունն առաջին հերթին կանգնեց Սոմալիի վրա, նախ՝ անհրաժեշտ է նայել Սոմալիի աշխարհագրական դիրքին. այն Աֆրիկայում ամենաերկար ափագիծն ունեցող երկիրն է (ավելի քան 3000 կմ՝ Մադա-

[8] Fırat Nehri ticaret ve turizm hattı olabilir, Deniz Haber, 11.05.2011.
[9] Türkiye, Somali'de askeri eğitim verecek, Yeni Akit, 07.01.2016.
[10] Türkiye, Somali'de askeri üs kuruyor, Bugün, 18.01.2016.

գասկար կղզին չհաշված), գտնվում է Արևելյան Աֆրիկայում՝ Աֆրիկյան եղջյուրի տարածաշրջանում, որտեղով անցնում է աշխարհի ամենակարևոր և առանցքային ջրուղիներից մեկը՝ Բաբ էլ Մանդեբի նեղուցը, որը Կարմիր ծովը բաժանում է Ադենի ծովածոցից: Այդ նեղուցով օրական անցնում է 3.5-4 մլն բարել նավթ, ինչը կազմում է ողջ մերձավորարևելյան նավթի 30%-ը: Սուեզի ջրանցքով, Կարմիր ծովով և Ադենի ծովածոցով տարեկան անցնում է 22.000 առևտրանավ, տվյալ երթուղուն բաժին է ընկնում համաշխարհային առևտրի 14%-ը՝ $1.8 տրլն: Թուրքիայի խորհրդարանը 2009թ. փետրվարից ամեն տարի երկարաձգում է Ադենի ծովածոցում, Սոմալիի տարածքային ջրերի մոտ, Արաբական ծովում և հարակից շրջաններում ռազմածովային ուժերի գործունեության ժամկետը: Վերջին անգամ դա տեղի ունեցավ 2016թ. փետրվարին:

Թուրքիան, ռազմական ներկայություն հաստատելով Սոմալիում, հնարավորություն կստանա նաև վերահսկել դեպի աֆրիկյան կարևոր երկրներ Եթովպիա և Քենիա տանող հաղորդակցության ուղիները: Այդպիսով, Սոմալին կդառնա աֆրիկյան մայրցամաքում առաջին երկիրը, որտեղ Թուրքիան կունենա ռազմակայան: Բացի այդ, Թուրքիան կդառնա Աֆրիկայում ռազմակայան ունեցող հինգերորդ երկիրը ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից և Ճապոնիայից հետո (Չինաստանը ներկայումս ծրագրել է ռազմակայան հիմնել Սոմալիի հարևան Ջիբութիում): Ինչպես գրել է թուրքական մամուլը, օսմանների թոռները վերստին հայտնվում են Աֆրիկայում (Սոմալիի հյուսիսը ժամանակին մտել է Օսմանյան կայսրության մեջ): Սոմալիում ռազմակայան բացելը տեղավորվում է Թուրքիայի նեոօսմանյան քաղաքականության շրջանակներում, որն արտահայտվում է նաև աֆրիկյան երկրների հետ հարաբերությունների աննախադեպ խորացմամբ. եթե 2002թ. Թուրքիան Աֆրիկայում ուներ 12 դեսպանատուն, ապա 2013թ.՝ 39 դեսպանատուն: 2014թ. թուրքական «Բարբարոս» նավախումբը 102 օրում անցավ ողջ Աֆրիկայի երկայնքով՝ այցելելով աֆրիկյան 24 երկրի 25 նավահանգիստ: Ընդ որում՝ թուրքական նավախումբն առաջին անգամ էր այցելել աֆրիկյան 19 երկիր, այդ թվում նաև Սոմալի[11]:

Ի դեպ, Բաբ էլ Մանդեբի նեղուցի կարևորությունը ժամանակին զգացել է Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքը, որը 1915-1916թթ. Դարդանելի օպերացիայում հաղթելը և այդպիսով Ստամբուլը

[11] Barbaros Türk Deniz Görev Grubu 24 ülkeyi ziyaret etti, Deniz Haber, 01.07.2014.

փրկելը պայմանավորել էր Անտանտի առջև Սևծովյան նեղուցները փակելու հանգամանքով, և միաժամանակ Օսմանյան կայսրության պարտությունը պայմանավորել էր նրանով, որ նրան չէր հաջողվել նույնն անել Կարմիր ծովը Հնդկական օվկիանոսի հետ կապող (Բաբ էլ Մանդեբի) նեղուցի պարագայում:

Սոմալիում թուրքական ռազմակայան հիմնելուն նպաստել է այն, որ Թուրքիան մեծ օգնություն է ցուցաբերել այդ երկրին և նրան պահել է իր ուշադրության կենտրոնում: Այդ երկիրը Սոմալիի հետ ռազմաֆինանսական համագործակցության շրջանակներում արդեն 5 տարի է՝ հատկացնում է ռազմական օգնություն: Բացի այդ, աֆրիկյան երկրին հատկացրել է ավելի քան $400 մլն՝ սովի դեմ պայքարի համար: 2011-2015թթ. Թուրքիայից Սոմալի 19 ինքնաթիռով և 10 նավով հասցվել են հազարավոր տոննա սննդամթերք, հացի գործարաններ, սառցախցիկներ, վրաններ, 300 տոննա դեղորայք և բժշկական պարագաներ և այլն (Սոմալիում Թուրքիայի դեսպանատունը, որը բացվել էր 1979թ. և քաղաքացիական պատերազմի պատճառով փակվել էր 1991թ., վերաբացվել է 2011թ.): Սոմալի են ուղարկվել 90 բժիշկ, մոտ 300 հոգանոց բժշկական անձնակազմ, այնտեղ հիմնվել է 4 դաշտային հիվանդանոց, տրվել է 5 շտապ-օգնության մեքենա: 2015թ. հունվարի 25-ին իր երկրորդ այցի ժամանակ Էրդոդանը Մոգադիշոյում մասնակցեց Թուրք-սոմալիական ուսումնական և հետազոտական հիվանդանոցի բացմանը՝ բաղկացած 200 մահճակալից[12]:

Ի դեպ, Էրդոդանի առաջին այցը Սոմալի տեղի էր ունեցել 2011թ., որով և նա դարձել էր վերջին 20 տարում այդ երկիր այցելած օտար պետության առաջին ղեկավարը: Եվ պատահական չէր, որ 2013թ. ամռանը Ստամբուլի «Գեզի» այգու համար բողոքի ակցիաների ժամանակ Մոգադիշոյում կազմակերպվել էր Էրդոդանին աջակցելու ակցիա, իսկ Սոմալիի ներկայիս նախագահ Հասան Շեյխ Մոհամուդն այդ պաշտոնը զբաղեցնելուց (2012թ. սեպտեմբեր) հետո՝ 2012թ. դեկտեմբերի սկզբին, իր առաջին արտասահմանյան այցը կատարեց Թուրքիա, ցուցաբերած օգնության համար շնորհակալություն հայտնեց նրա ղեկավարությանը և հայտարարեց, որ «քանի դեռ կա Թուրքիան, Սոմալին չի մոռացվի»[13]:

Ի դեպ, Սոմալին 2016թ. հունվարին խզեց Եմենի շիա ապստամբներին աջակցող Իրանի հետ դիվանագիտական հարաբերությունները՝ դրանով իսկ ա-

[12] Türkiye - Somali Siyasi İlişkileri, www.mfa.gov.tr

[13] Somali'de Başbakan Erdoğan'a destek gösterisi, Sabah, 20.06.2013.

ջակցելով Սաուդյան Արաբիային և նրա տարածաշրջանային դաշնակիցներին: Թուրքիայի կողմից Սոմալիին հումանիտար օգնություն ցուցաբերելու և սիրիացի փախստականներին օգնելու դեպքերը ցույց են տալիս, որ իրականում այդ երկիրը ոչինչ չի անում անհատույց և ունի հեռահար նպատակներ: Սոմալիում ռազմական հիմնելը և սիրիացի փախստականների միջոցով ԵՄ-ի հետ շահավետ գործարքի գնալը (խոշոր գումարի, ոչ վիզային ռեժիմի, ԵՄ-ին անդամակցելու գործընթացի աշխուժացման խոստումների ստանալը) դրա վկայությունն են:

Սիրիա. 2016թ. ապրիլի վերջին Թուրքիայի վարչապետ Ահմեթ Դավութօղլուն հայտարարեց, որ ԻՊ-ը նույն թվականի հունվարի 18-ից սկսած՝ 46 հրթիռ է արձակել Թուրքիայի Քիլիս սահմանային նահանգի տարածքի ուղղությամբ, ինչի հետևանքով նահանգում զոհվել է 17 մարդ[14]: Դրա հետ կապված՝ Քիլիս նահանգում ապրիլին կազմակերպվեց բողոքի ակցիա, որի մի քանի հարյուր մասնակիցներն իշխանություններից պահանջեցին ապահովել իրենց անվտանգությունը (ապրիլին Թուրքիայի զինված ուժերը մեծացրին Սիրիայի հետ սահմանի երկայնքով տեղակայված տանկերի և հաուբիցների թիվը): Խոսքը Սիրիայի հետ սահմանի այն հատվածի (Ազեզ-Ջերաբլուս) մասին է, որի հակառակ կողմում ընկած տարածքները գտնվում են ԻՊ վերահսկողության տակ:

2016թ. մայիսի 12-ին Էրդողանն Անկարայում հայտարարեց, որ թուրքական բանակը պատրաստվում է ԻՊ զինյալներից մաքրել Սիրիայի այն տարածքը, որը գտնվում է նրանց վերահսկողության տակ և սահմանակից է Քիլիս նահանգին: Էրդողանը հիշեցրել է, որ վերջին շրջանում ԻՊ զինյալները գրեթե ամեն օր հարվածում են Քիլիսի նահանգին, կրակում են թուրք սահմանապահների վրա և, իր տվյալներով՝ այդ ամենի պատճառով Քիլիսում զոհվել են 130 խաղաղ բնակիչ ու անվտանգության ուժերի ներկայացուցիչ. «Այդ պատճառով էլ մենք ցանկանում ենք տվյալ տարածքը մաքրել ԻՊ զինյալներից: Սակայն այդ հարցում դեռ ցանկալի աջակցություն չենք ստացել մեր դաշնակիցներից և մասնավորապես նրանցից, ովքեր զորքեր ունեն տարածաշրջանում»[15]:

Դժվար է պատկերացնել, թե ԻՊ-ն ինչ նպատակներ կարող է հետապնդել Քիլիսը հրթիռակոծելով և հրետակոծելով, սակայն ակնհայտ է, որ դա Թուրքիայի համար Սիրիայի հյուսիս ներխուժելու և այնտեղ «անվտանգության գո-

[14] Başbakan Davutoğlu Kilis için alınan önlemleri açıkladı, CNN TÜRK, 26.04.2016.
[15] Erdoğan'dan Suriye'ye 'kara harekatı' sinyali, Cumhuriyet, 12.05.2016.

տի» ձևավորելու «օրինական հիմք» է ստեղծում, որը սեպի դեր կխաղա Սիրիայի քրդերի Քոբանի և Աֆրին շրջանների միջև (ավելի վաղ ծրագրվել էր այդ գոտին հիմնել Քամըշլրի շրջանում, որպեսզի այն սեպի դեր խաղար Սիրիայի, Իրաքի և Թուրքիայի քրդերի միջև)։ 2015թ. ամռանը, երբ Թուրքիան Սիրիայի քրդերին արգելեց անցնել («կարմիր գիծ» սահմանեց) Եփրատ գետի արևմտյան ափը և նման փորձերի ժամանակ քանիցս հարվածեց նրանց, թուրքական մամուլը չբացառեց, որ Ազեզ-Ջերաբլուս հատվածն անցնելու է Թուրքիային[16]։

Ի դեպ, այս իրավիճակը հիշեցնում է Հյուսիսային Իրաքում Քրդստանի աշխատավորական կուսակցության (*PKK*) շուրջ տիրող իրավիճակը, որին (ինչպես և ԻՊ-ին) Թուրքիան համարում է ահաբեկչական կառույց։ Թուրքիան Հյուսիսային Իրաքը պարբերաբար ռմբահարելու կապակցությամբ Բաղդադի կենտրոնական կառավարության բողոքներին շարունակ պատասխանում է նրանով, որ վերջինս չի կարողանում վերահսկել իր ողջ տարածքը, և Թուրքիան հարկադրված է գնում նման քայլի (Թուրքիան ժամանակ առ ժամանակ Հյուսիսային Իրաքում նաև ցամաքային ռազմական գործողություններ է իրականացնում *PKK*-ի դեմ)։ Դավութօղլուն նկատել է, որ Սիրիայի իշխանությունները վերահսկում են Թուրքիայի հետ սահմանի աննշան հատվածը, իսկ Իրաքի իշխանություններն ընդհանրապես չեն վերահսկում նրա հետ սահմանը։

Վերադառնալով ԻՊ-ի կողմից Թուրքիայի տարածքներին հարվածելու հարցին՝ պետք է ասել, որ դա, ըստ ամենայնի՝ ունի երկու հիմնական նպատակ։ Առաջինը միտված է չեզոքացնել տարածում գտած այն կարծիքները, թե Թուրքիան աջակցում է ԻՊ-ին և ըստ էության չի պայքարում նրա դեմ (Էրդողանն այժմ հայտարարում է, թե ոչ մի երկիր այդչափ չի տուժել ԻՊ գործողություններից և ոչ մի երկիր ԻՊ-ի դեմ չի պայքարում այնպիսի ջանասիրությամբ, ինչպես Թուրքիան[17])։ Իսկ երկրորդ պատճառն, ըստ ամենայնի, այն է, որ հասկանալի է, որ վաղ թե ուշ ԻՊ զինյալներին վտարելու են Ազեզ-Ջերաբլուս հատվածից, և ԻՊ-ը նախընտրում է այն թողնել ոչ թե Սիրիայի քրդերին, այլ Թուրքիային, ինչի համար էլ ԻՊ-ը շարունակ հարվածում է Թուրքիային՝ հնարավոր ներխուժմանն օրինականության երանգ հաղորդելու համար։ Ի դեպ, Թուրքիան ցանկանում էր այդ հարցում սադրել Սիրիայի քրդերի Դեմոկրատական միություն կուսակցությանը (*PYD*) և նրա ռազմական թև *YPG*-ին՝

[16] O topraklar Türkiye'nin olacak, Akşam, 05.08.2015.

[17] Cumhurbaşkanı Erdoğan: DAEŞ'le yaptığımız mücadeleyi hiç bir ülke yapmadı, Hürriyet, 11.05.2016.

հրետակոծելով նրանց դիրքերը, որպեսզի պատասխան հարվածներ ստանալու դեպքում նրանց դեմ ձեռնարկեր ցամաքային ռազմական գործողություն (Թուրքիան *PYD*-ը համարում է ահաբեկչական և *PKK* սիրիական թև)։ Սակայն Սիրիայի քրդերը խելամտություն ցուցաբերեցին, տուրք չտվեցին Թուրքիայի սադրանքներին և չբացեցին պատասխան կրակ (*PKK* առաջնորդներից Մուրադ Քարայըլանը հայտարարեց, որ սահմանի այն կողմում (Թուրքիայում) բնակվում են քրդերը, ինչը զսպիչ գործոն է)։ Դրանից հետո Թուրքիան հարկադրված եղավ այդ հարցում դիմել ԻՊ օգնությանը։ Թուրքիան, որը տարիներ առաջ Սիրիայից բխող «ականանետային և հրետանային հարձակումների» համար դիմել էր ՆԱՏՕ-ին և ստացել էր *Patriot* զենիթահրթիռային համալիրներ (որոնք իրականում թուրքական կողմի մտահոգացմամբ պետք է ծառայեին Սիրիայի հյուսիսում թռիչքազերծ գոտի ստեղծելուն և ոչ թե Սիրիայի տարածքից իրականացվող հրետանային ու ականանետային կրակոցներին), այժմ էլ հասել է նրան, որ թուրք-սիրիական սահմանին տեղակայվելու են ամերիկյան *HIMARS* (*High Mobility Artillery Rocket System*) համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր։

Այսպիսով, Թուրքիան ձգտում է ամեն գնով թույլ չտալ Սիրիայի քրդերի Քոբանի և Աֆրին շրջանների միավորումը՝ հեռահար կանխելով նաև նրանց դուրս գալը Միջերկրական ծով։ Թուրքիան Սիրիայում ռազմական ներկայություն հաստատելով ցանկանում է նաև որոշակիորեն զսպել Իրանի ազդեցությունն այդ երկրում։ 2016թ. մարտի սկզբին Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը հայտարարեց, որ քանի դեռ Սիրիայում գտնվում են իրենց օդատիեզերական զորքերը, Թուրքիան հազիվ թե համարձակվի ցամաքային ռազմական գործողություն իրականացնել այնտեղ։ Եվ այնուամենայնիվ, չպետք է ամբողջովին բացառել նման գործողության հավանականությունը։ Դա անելու համար Թուրքիային անհրաժեշտ է երկու գործոնի առկայության ապահովում. ա) նախ պետք է ներկայացնել ցամաքային ռազմական գործողության անհրաժեշտության քիչ թե շատ համոզիչ հիմնավորումներ, ինչը նրան հաջողվում է ԻՊ հրետակոծությունների տեսքով (թեպետ եթե չլինեին բաց սահմաններով ԻՊ-ին Թուրքիայի աջակցությունն ու Սիրիայի քրդերին Եփրատի արևմտյան ափն անցնելու արգելքը, ապա վերջիններս վաղուց ԻՊ-ին վտարած կլինեին Ազեզ-Ջերաբլուս հատվածից, և Քիլիսը չէր ենթարկվի հարձակումների, չէին գրանցվի զոհեր), բ) Թուրքիան պետք է ստանա իր դաշնակիցների և առաջին հերթին ԱՄՆ համաձայնությունը, աջակ-

ցությունը: Եվ անգամ նման աջակցության բացակայության դեպքում Թուրքիան կարող է ահաբեկչության դեմ պայքարի պատրվակով գնալ նման քայլի (նման հիմք են տալիս վերջին շրջանում Թուրքիայի կողմից ԱՄՆ բազմաթիվ կոչերը պարզապես անտեսելը, որոնք առնչվել են *PKK*-ի փոխարեն ԻՊ-ին հարվածելու վրա կենտրոնանալուն, Սիրիայի հետ սահմանը փակելուն, ինչպես նաև Հյուսիսային Իրաքում տեղակայված զորքը դուրս բերելուն), և դժվար է պատկերացնել, որ այդ դեպքում Սիրիայում գտնվող ռուսական օդուժը կարող է հարվածել Սիրիա մուտք գործած թուրքական ցամաքային ուժերի ստորաբաժանումներին:

Իրաք. 2015թ. դեկտեմբերի սկզբին Թուրքիան տանկային մեկ գումարտակ (600 զինծառայող) տեղակայեց Մոսուլից հյուսիս ընկած Բաշիքայի ճամբարում: Թուրքական մամուլի հաղորդմամբ՝ դրանով իսկ Իրաքում թուրք զինծառայողների թիվը հասավ 1600-ի, և Թուրքիան դարձավ Իրաքում ամենաշատ զինվորականներ ունեցող երրորդ երկիրը՝ ԱՄՆ-ից ու Իրանից հետո: Պլանավորված էր Իրաք ուղարկել ևս 400 զինծառայող, և այդպիսով այդ երկրում թուրք զինծառայողների թիվը կհասներ 2000-ի[18]: Սակայն դա հարուցեց Իրաքի իշխանությունների զայրույթը, որոնք դա որակեցին որպես ներխուժում և պահանջեցին գումարտակը դուրս բերել երկրի տարածքից, քանի որ դա իրականացվել էր առանց իրենց համաձայնության: Թուրքիան, սակայն, պնդեց, որ իր զինծառայողներն Իրաքում «գտնվում» են նրա իշխանությունների խնդրանքով և արդեն 2.5 տարի զբաղվում են Փեշմերգայի (Իրաքի քրդերի) մարտիկների ռազմական ուսուցմամբ:

Ի դեպ, թուրքական զորքի տեղակայումից քիչ անց ԻՊ-ը դեկտեմբերին, կարծես պատվերով, երկու անգամ հարձակվեց այդ ճամբարի վրա՝ հաստատելու համար այնտեղ թուրքական զորքի գտնվելու անհրաժեշտության մասին թուրքական պնդումը (հետագայում էլ մի քանի անգամ հաղորդվեց Իրաքում թուրք զինվորականների և ԻՊ զինյալների բախումների մասին): Հետագայում Թուրքիան համաձայնեց իր զորքի միայն մի մասը հեռացնել Բաշիքայից (Իրաքի մեկ այլ վայր՝ Դոհուկ և Թուրքիա):

Թուրքիայի այս քայլը կարելի է բացատրել նրանով, որ տարածաշրջանային և գլոբալ հավակնություններ ունեցող երկրին մտահոգում է այն, որ նա չի կարողանում որևէ լուրջ դերակատարություն ունենալ անգամ իր հարևանների՝ Սիրիայի և Իրաքի հակամարտություններում (որոնց հետ ունի մոտ

[18] Türkiye, ‘Irak’a rağmen’ ülkedeki asker sayısını daha da artırmayı planlıyor, Diken, 06.12.2015.

1250 կմ սահման), ինչը բացասաբար է ազդում նրա վարկի վրա: Թուրքիան այդ քայլով ցանկանում է տարածաշրջանում (և ոչ միայն) հիշեցնել իր ազդեցիկ խաղացող լինելու մասին: Այս քայլը տեղավորվում է նաև նրա նեոսմանյան քաղաքականության շրջանակներում՝ հաշվի առնելով, որ Մոսուլը (Իրաք) գտնվել է Օսմանյան կայսրության կազմում, և Թուրքիայի Հանրապետությունը միշտ էլ աչք է ունեցել Մոսուլի վրա: Քրդական մամուլում էլ հրապարակումներ եղան, թե Թուրքիան զբաղված է Իրաքում սուննի բանակ ձևավորելով, ինչը վկայում է, որ Թուրքիայում մտածում են Իրաքում հետԻՊ-յան ժամանակաշրջանի մասին: Թուրքիան փորձում է նաև զսպել Իրանի ազդեցությունն Իրաքում և նրան հիշեցնում է, որ ռազմական առումով ներկայացված է Իրաքում: Թուրքական մամուլը Բաշիքայում զորք տեղակայելը շաղկապել է նաև ԻՊ-ից նավթի ապօրինի գնումների «քրդական երթուղու» անվտանգության ապահովման հետ:

Ի դեպ, 2016թ. փետրվարին Էրդողանը հայտարարել էր, թե սխալ է համարում, որ 2003թ. մարտի 1-ին Թուրքիայի խորհրդարանն ԱՄՆ-ին չթույլատրեց զորք և ռազմատեխնիկա կենտրոնացնել Թուրքիայում՝ Իրաքի դեմ հյուսիսային ճակատ բացելու համար: Հիշեցնելով, որ ինքը կողմ է եղել դրան և բաց հայտարարել է այդ մասին, Էրդողանը նկատել էր, որ եթե այն ժամանակ ընդունվեր մարտի 1-ի օրինագիծը, ապա Թուրքիան այսօր ներկայացված կլիներ Իրաքում, և Իրաքը չէր լինի այս վիճակում[19]:

Այսպիսով, Թուրքիան շարունակելու է իր «ռազմակայանային» քաղաքականությունը՝ ուշադրության կենտրոնում պահելով նախկինում Օսմանյան կայսրության մեջ մտած տարածքները՝ իր կշիռը տարածաշրջանային և գլոբալ առումներով կտրուկ մեծացնելու համար՝ որպես այսպես կոչված «Նոր Թուրքիա» (Էրդողանը շատ է սիրում կիրառել այդ արտահայտությունը): Կատարում թուրքական ռազմակայանի բացումից հետո թուրքական *Yeni Şafak* թերթի գլխավոր խմբագիր Իբրահիմ Քարագյուլը գրեց, որ այդ երկրում ռազմակայան հիմնելը բավական չէ, և որ Թուրքիան պետք է հնարավորինս շուտ ռազմակայաններ ստեղծի նաև Սաուդյան Արաբիայում, Լիբանանում, Եմենում ու Սիրիայում[20]: Ի դեպ, 2015թ. դեկտեմբերի վերջին նույն թերթը հարցում էր անցկացրել ընթերցողների շրջանում, թե որը կլինի Թուրքիայի 82-րդ նահանգը՝ առաջարկելով 4 տարբերակ՝ Մոսուլ, Գազա, Հալեպ, Սոմալի[21]:

[19] Irak'taki hataya düşmeyelim, Hürriyet, 07.02.2016.
[20] Türkiye, S. Arabistan'a da askeri üs kurmalı, Yeni Şafak, 29.04.2016.
[21] Türkiye'nin 82'inci ili Musul mu Gazze mi?, Yeni Şafak, 22.12.2015.

ԹՈՒՐՔԻԱՅԻ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. մայիս

Հայկ Գաբրիելյան[*]

Թուրքիա-Ռուսաստան. *Տնտեսական.* Մայիսին Ռուսաստանի տրանսպորտի նախարարության միջգերատեսչական հանձնաժողովը դիտարկումից հանեց Թուրքիա կանոնավոր չվերթների թույլտվություն ստանալու մասին ռուսական ավիաընկերությունների հայտերը: *Nordwind Airlines* ավիաընկերությունը թույլտվություն էր խնդրել Օմսկ, Չելյաբինսկ, Պերմ, Սամարա, Ուֆա, Կազան, Նիժնի Նովգորոդ, Վորոնեժ, Վոլգոգրադ քաղաքներից շաբաթական 7 անգամ թռչել Ստամբուլ և Անթալիա: Իսկ *Pegas Fly* ավիաընկերությունը խնդրել էր շաբաթական 2 անգամ Անթալիա թռչել Կրասնոյարսկ, Իրկուտսկ, Խաբարովսկ, Սամարա, Պերմ, Ուֆա քաղաքներից:

Մայիսին հաղորդվեց, որ 2016թ. առաջին 4 ամիսներին Անթալիայում ռուսաստանցի զբոսաշրջիկների հոսքը նվազել է 90%-ով՝ 2015թ. նույն ժամանակահատվածի համեմատ: 2016թ. ապրիլին Թուրքիա այցելած օտարազգի զբոսաշրջիկների թիվը նախորդ տարվա ապրիլի համեմատ կրճատվել է 28%-ով՝ մինչև 1.75 միլիոն մարդու: Ռուսաստանցի զբոսաշրջիկների պարագայում անկումը կազմել է 79.28%: Թուրքիայի մշակույթի և զբոսաշրջության նախարարության տվյալներով՝ ապրիլին գրանցվել է վերջին 17 տարվա ամենամեծ անկումը, երբ (1999թ.) հայտարարվեց քուրդ առաջնորդ Աբդուլա Օջալանի կալանավորման մասին (այն ժամանակ դա բողոքի մեծ ալիք էր բարձրացրել Թուրքիայում, և եվրոպացի զբոսաշրջիկներին խորհուրդ չէին տվել այցելել Թուրքիա):

Մայիսին հաղորդվեց, որ 2016թ. առաջին եռամսյակում «Գազպրոմը» Թուրքիային գազի մատակարարումների ծավալը 2015թ. նույն ժամանակահատվածի համեմատ կրճատել է 18%-ով՝ մինչև 6.41 մլրդ մ^3-ի: 2015թ. Թուրքիա ռուսական գազի մատակարարումների ծավալը կազմել է 27 մլրդ մ^3:

[*] Թուրքագետ:

Թուրքիայի փոխվարչապետ Մեհմեթ Շիմշեքը հայտարարեց, որ երկրի համար մեծ ռիսկ է գազի հարցում Ռուսաստանից ունեցած կախվածության ներկայիս աստիճանի պահպանումը. «Թուրքիան հարկադրված է երկրում սպառվող բնական գազի 97%-ը ներկրել արտերկրից, ընդ որում՝ գազի 58%-ը ստացվում է Ռուսաստանից, և բնականաբար, Ռուսաստանից նման կախվածության մեջ մնալը մեծ ռիսկ է»:

Մայիսին «Ռոսսելխոզնադզորը» վիրուս հայտնաբերելու պատճառով ժամանակավոր սահմանափակումներ մտցրեց Թուրքիայից դդմիկների, դդումների, հազարի մատակարարման վրա, ինչը տարածվում է նաև երրորդ երկրներից Ռուսաստան մատակարարումների վրա: Դրա հետ կապված՝ Ռուսաստանի նախագահի մամլո քարտուղար Դմիտրի Պեսկովը հերքեց, թե «Ռոսսելխոզնադզորը» զբաղվում է քաղաքականությամբ, և որ նա զբաղվում է միայն իր գործով: Այդպիսով, Ռուսաստանը գրեթե ամբողջովին կասեցրեց Թուրքիայից մրգերի և բանջարեղենի ներկրումը: Գյուղմթերքի ոլորտում Թուրքիայի դեմ Ռուսաստանի սահմանած պատժամիջոցներն ուժի մեջ են մտել 2016թ. հունվարի 1-ից:

Քաղաքական. Մայիսին շարունակվեցին Ռուսաստանի և Թուրքիայի բարձրաստիճան ներկայացուցիչների փոխադարձ քննադատությունները, մեղադրանքները: ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը հայտարարեց, թե Ռուսաստանին մտահոգում են Թուրքիայի կողմից Սիրիայի տարածքի հրետակոծումները, Սիրիայում անվտանգության գոտիներ ստեղծելու պահանջները, ինչպես նաև Թուրքիայի կողմից Սիրիայի տարածքում ռազմական գործողություն պատրաստելու մասին ավելի հաճախակիացող խոսակցությունները: Դրա հետ մեկտեղ, Լավրովը նշեց, որ Մոսկվան կասկածում է, թե որևէ մեկը կհամարձակվի Սիրիայում իրականացնել ցամաքային գործողություն՝ հաշվի առնելով այնտեղ Ռուսաստանի օդատիեզերական ուժերի առկայությունը:

Թուրքիայի նախկին վարչապետ Ահմեթ Դավութօղլուն մինչ այդ հայտարարել էր, թե Թուրքիան կարող է միայնակ ցամաքային ռազմական գործողություն իրականացնել Սիրիայի հյուսիսում: Ս.Լավրովը նաև բարձրացրեց Թուրքիայի և ահաբեկիչների միջև նավթային և անտիկ իրերի մաքսանենգ բիզնեսի հարցը՝ ընդգծելով, որ Թուրքիայի ղեկավարությունը ոչ միայն ոչինչ չի ձեռնարկել դա կանխելու համար, այլև «ձեռքերն է տաքացրել» այդ

բիզնեսով: Ս.Լավրովը նաև հայտարարեց թուրք-սիրիական սահմանը շուտափույթ փակելու անհրաժեշտության մասին և Թուրքիայից պահանջեց Իրաքից հանել իր զորքը:

ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուն իր հերթին հայտարարեց, որ «Ջաբհաթ ալ-Նուսրա» և ԻՊ ահաբեկչական խմբավորումների զինյալների կողմից թուրք-սիրիական սահմանի անարգել հատումը ապակայունացնում է իրավիճակը Սիրիայում, որ դա ահաբեկիչներին թույլ է տալիս իրենց ջոկատները համալրել զինյալներով, փոխհատուցել սպառազինության և ռազմատեխնիկայի կորուստները, նպաստում է նրանց ռազմական հնարավորությունների աճին ու նորանոր տարածքներ զավթելու փորձեր ձեռնարկելուն:

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանը Ստամբուլի գրավման 563-րդ տարեդարձի կապակցությամբ ունեցած ելույթում դատապարտեց Սիրիայում Ռուսաստանի և Իրանի գործողությունները. «Ի՞նչ գործ ունեն Ռուսաստանն ու Իրանը Սիրիայում: Ինչո՞վ են նրանք զբաղված այնտեղ»:

Մայիսին ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան հայտարարեց, որ Ռուսաստանն արել է ամեն հնարավոր բան, որպեսզի Թուրքիայի հետ տարաձայնությունները լուծի բանակցային սեղանի շուրջ, սակայն ամեն ինչ կախված է Թուրքիայի ղեկավարության դիրքորոշումից, որը, սակայն, ցանկանում է վերականգնել Օսմանյան կայսրության երբեմնի հզորությունը. «Մենք բոլորս գիտենք, թե ինչ ավարտ ունեցավ Օսմանյան կայսրությունը: Մենք շատ բան ենք հանդուրժել, մենք հիանալի իմացել ենք Ղրիմի և Սիրիայի հարցում Թուրքիայի վարած քաղաքականության մասին»: Խոսելով այն մասին, որ Թուրքիայի արտգործնախարար Մևլյութ Չավուշօղլուն հայտարարել էր հրաժարական տալու պատրաստակամության մասին, եթե Ռուսաստանը կարողանա ներկայացնել Անկարայի կողմից ԻՊ-ին աջակցելու վերաբերյալ գեթ մեկ ապացույց, Մ.Զախարովան հայտարարեց, որ Չավուշօղլուն պետք է հրաժարական տար թուրքական օդուժի կողմից Սիրիայի երկնքում ռուսական ռմբակոծիչը խոցելուց հետո, իսկ ԻՊ-ի հետ կապերի համար ոչ թե հրաժարական են տալիս, այլ բանտ նստում: Մ.Զախարովան դատապարտեց նաև Թուրքիայում խոսքի ազատության շուրջ տիրող իրավիճակը, ուր մարդկանց կալանավորում, ահաբեկում և արտաքսում են ամենափոքր քննադատության, հեգնանքի կամ երգիծանքի փորձի համար:

Մայիսին ՄԱԿ-ում Ռուսաստանի մշտական ներկայացուցիչ Վիտալի Չուրկինը հայտարարեց, որ Իրաքի Տիկրիտ քաղաքում իսլամականների օգտագործած պայթուցիկ խառնուրդների քիմիական վերլուծությունը ցույց է տվել, որ դրանք արտադրված են եղել Թուրքիայում: Ռուսաստանի փոխարտգործնախարար Գենադի Գատիլովը Թուրքիայի իշխանություններին մեղադրեց Ժնևում միջսիրիական բանակցությունների ընթացքը խոչընդոտելու համար:

Մայիսին թուրքական դատախազությունը եզրակացրեց, որ չկան բավականաչափ հանցանշաններ, որոնք կապացուցեին, որ ռուսական «Սու-24»-ի օդաչուի ենթադրյալ մարդասպան Ալփարսլան Չելիքն է սպանել Օլեգ Պեշկովին: Ապա Ռուսաստանի իրավապահ մարմինները քրեական գործ հարուցեցին Պեշկովի սպանության փաստի կապակցությամբ:

Մայիսին Թուրքիայի ԱԳՆ-ն հայտարարություն տարածեց Ղրիմի թաթարների բռնագաղթի 72-րդ տարելիցի կապակցությամբ՝ այն որակելով որպես մարդկության պատմության «սև էջ». «Ղրիմի ավելի քան 100 հազ. թաթար այսօր էլ բնակվում է հայրենի հողից հեռու: Ռուսաստանի կողմից Ղրիմի ապօրինի բռնակցումը բացել է ավելի քան 70-ամյա վաղեմության բռնագաղթի վերքերը: Թուրքիան մշտապես կգտնվի Ղրիմի թաթարների կողքին»: Ի պատասխան՝ Մ.Զախարովան հայտարարեց, որ Թուրքիան փորձում է շահարկել Ղրիմի թաթարների արտաքսումը, նրանց ներկայիս դրությունը և Թուրքիայի իշխանություններին հրավիրեց Ղրիմ՝ ամեն ինչ սեփական աչքերով տեսնելու համար:

Բացի այդ, Թուրքիայի ԱԳՆ-ն հայտարարություն տարածեց Ռուսաստանում չերքեզների զանգվածային արտաքսման հերթական տարելիցի կապակցությամբ՝ այն որակելով որպես «մարդկության պատմության ամենազանգվածային հանցագործություններից մեկը». «19-րդ դարում տեղի ունեցած մարտերի ժամանակ ցարական Ռուսաստանը մուտք է գործել Կովկաս, որտեղ հետապնդումների և հալածանքների հետևանքով սպանվել են այդ տարածաշրջանի հարյուր հազարավոր բնակիչներ: Իսկ նրանք, ովքեր ողջ են մնացել, վերաբնակեցվել են Անատոլիայում: Չերքեզների զանգվածային արտաքսումը խորապես մխրճվել է Կովկասի ժողովուրդների հիշողության մեջ և խոր հետք է թողել նրանց սրտերում»:

Մայիսին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը չմեկնեց Ստամբուլ՝ մասնակցելու Համաշխարհային հումանիտար գագաթաժողովին:

Դ.Պեսկովը դա պատճառաբանեց Վ.Պուտինի աշխատանքային գրաֆիկի ծանրաբեռնվածությամբ: Վ.Պուտինն իր հերթին հայտարարեց, որ չնայած «Սու-24-ի» միջադեպին՝ Ռուսաստանը ցանկանում է վերականգնել Թուրքիայի հետ հարաբերությունները. «Բայց Ռուսաստանը Թուրքիայից լսել է ոչ թե ներողություն խնդրելու, ինչպես նաև վնասը փոխհատուցելու պատրաստակամության, այլ միայն հարաբերությունները վերականգնելու ցանկության մասին հայտարարություններ: Մենք նույնպես ցանկանում ենք հարաբերությունների վերականգնում, որոնք մենք չենք փչացրել: Ես ցայժմ չեմ հասկանում, թե ինչու է դա արվել: Հարաբերությունների վերականգնման համար Անկարան, հայտարարություններից բացի, պետք է կոնկրետ քայլեր ձեռնարկի»:

Ապա Էրդողանը հայտարարեց, թե Թուրքիան ցանկանում է վերականգնել հարաբերությունները Ռուսաստանի հետ, սակայն չի հասկանում, թե ինչից է պետք սկսել. «Ես չեմ հասկանում, թե մեզանից ինչպիսի առաջին քայլ են սպասում: Մենք այնպիսի երկիր չենք, որը նստում է մեղադրյալի աթոռին: Չենք ուզում վիճել Ռուսաստանի հետ, ընդհակառակը, ցանկանում ենք զարգացնել հարաբերությունները նրա հետ: Պուտինի հետ եղել ենք ընկերներ, և երբ սխալ գործած օդաչուի կամ այլ պատճառով զոհաբերում են Թուրքիայի նման մեծ երկրի, դա մտածելու տեղիք է տալիս»:

Մայիսին Չավուշօղլուն հայտարարեց, որ Անկարան Մոսկվային առաջարկում է ստեղծել աշխատանքային խումբ՝ կարգավորմանը միտված ապագա քայլերի քննարկման համար: Դ.Պեսկովը, սակայն, հայտարարեց, որ ոչ մի աշխատանքային խումբ ի զորու չէ լուծել երկու երկրների միջև առկա խնդիրները, և որ դա կարող է անել միայն Թուրքիայի ղեկավարությունը՝ կատարելով Ռուսաստանի նախապայմանները: Ս.Լավրովն էլ հայտարարեց, որ Ռուսաստանը մտադիր չէ առաջինը հանդես գալ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման նախաձեռնությամբ, սակայն պատրաստ է դիտարկել Անկարայի համապատասխան դիմումները: Նա ընդգծեց, որ դա նոր առաջարկ չէ, և որ աշխատանքային խմբի մասին առաջարկը ստացվել է 2015թ. դեկտեմբերին Բելգրադում ԵԱՀԿ շրջանակներում Թուրքիայի արտգործնախարարի հետ իր հանդիպման ժամանակ:

Մայիսին Թուրքիայի փոխվարչապետ Նուման Քուրթուլմուշը նույնպես հայտարարեց, որ Անկարան հուսով է շուտափույթ կարգավորել ռուս-թուրքական հարաբերություններն ու չի տեսնում անլուծելի խնդիրներ. «Ո՛չ Ռու-

սաստանը, ո՛չ Թուրքիան չեն կարող զոհաբերել դրանք»: Չնայած դրան՝ Էրդողանը շարունակեց Ռուսաստանին քննադատելն ու մեղադրելը: Մեկնաբանելով Հաքքարի նահանգի Չուքուրջա շրջանում *PKK* զինյալների կողմից ռուսական արտադրության «Իգլա» շարժական զենիթահրթիռային համալիրով թուրքական «Կոբրա» մարտական ուղղաթիռի ոչնչացումը, որի 2 օդաչուները զոհվել են, Էրդողանը հայտարարեց. «Այո՛, մենք գիտենք, որ Ռուսաստանը զենք է տվել ահաբեկչական կազմակերպությանը: Ներկայումս ահաբեկիչներն (*PKK*) օգտագործում են Ռուսաստանի տված ՀՕՊ զենք և հրթիռներ, որոնք հատկացվել են Սիրիայի և Իրաքի միջոցով»: Դա ռուս-թուրքական հարաբերությունների վատթարացումից հետո առաջին դեպքն էր, երբ Թուրքիան Ռուսաստանին մեղադրում է *PKK*-ին զենք մատակարարելու համար: Ռուսաստանի փոխարտգործնախարար Միխայիլ Բոգդանովն Էրդողանից պահանջեց ներկայացնել համապատասխան ապացույցներ:

Մայիսին Թուրքիայի նոր վարչապետ Բինալի Յըլդըրըմը խորհրդարանին ներկայացրեց իր կառավարության արտաքին քաղաքականության ծրագիրը, որում նշված էր, որ Անկարան մտադիր է շարունակել Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորումը: Դրա հետ կապված՝ Մ.Զախարովան հայտարարեց, որ Մոսկվան Թուրքիայի նոր կառավարության աշխատանքի մասին դատողություններ կանի՝ ելնելով նրա կատարած գործերից, և որ խնդիրը ոչ թե Թուրքիայի կառավարության կազմն է, այլ նրա կուրսը: Ռուսաստանի Դաշնության խորհրդի՝ միջազգային հարցերով հանձնաժողովի ղեկավար Կոնստանտին Կոսաչևը հայտարարեց, որ Թուրքիայի վարչապետի պաշտոնում Բինալի Յըլդըրըմի նշանակումը տեխնիկական հարց էր, որով Էրդողանն ապահովեց կառավարման խորհրդարանական համակարգից նախագահական համակարգի անցնելու հարցը:

Մայիսին Էրդողանը քննադատեց ՆԱՏՕ-ին՝ Սև ծովում ոչ բավարար ներկայության համար. «Անհրաժեշտ է Սև ծովը դարձնել կայունության ծով: Ես խոսել եմ ՆԱՏՕ գլխավոր քարտուղարի հետ, ասել եմ, որ դուք ներկայացված չեք Սև ծովում, ինչի համար էլ այն գրեթե վերածվել է ռուսական լճի: Մենք պետք է կատարենք մեր պարտքը՝ որպես Սև ծովում ափ ունեցող երկիր: Եթե մենք միջոցներ չձեռնարկենք, պատմությունը չի ների մեզ»: Էրդողանը կոչ արեց ուժեղացնել Սևծովյան տարածաշրջանում համագործակցությունն ու համակարգումը և հույս հայտնեց, որ կոնկրետ արդյունքներն ի

հայտ կգան արդեն ՆԱՏՕ գագաթաժողովից հետո, որը Վարշավայում անցկացվելու է հուլիսի 8-9-ը:

Թուրքիա-Ադրբեջան, Վրաստան. Մայիսի սկզբին Ադրբեջան ժամանեց Թուրքիայի ժանդարմերիայի հրամանատար, բանակի գեներալ Գալիբ Մենդին, որը հանդիպումներ ունեցավ Ադրբեջանի ռազմական կառույցների ղեկավարների, այդ թվում նաև պաշտպանության նախարար Զաքիր Հասանովի հետ, քննարկեց երկու երկրների միջև ռազմական համագործակցության զարգացման հեռանկարները:

Մայիսին Գաբալայում տեղի ունեցավ Ադրբեջանի, Թուրքիայի և Վրաստանի պաշտպանության նախարարներ Զաքիր Հասանովի, Իսմեթ Յըլմազի և Թինաթին Խիդաշելու հանդիպումը, որոնք քննարկեցին տարածաշրջանային և երկկողմ համագործակցությանն առնչվող հարցեր: Հանդիպման արդյունքներով հայտարարվեց, որ Ադրբեջանը, Թուրքիան և Վրաստանը կանցկացնեն համատեղ զորավարժություններ՝ միտված երեք երկրների զինված ուժերի մարտունակության և մարտական պատրաստականության բարձրացմանը (դրանք կարող են 2017թ. ամռանն անցկացվել Վրաստանում): Կողմերն ընդգծեցին կիբեռանվտանգության ոլորտում սերտ համագործակցության անհրաժեշտությունը, կարևորեցին նավթագազային խողովակաշարերի պաշտպանությունը և պայմանավորվեցին եռակողմ ձևաչափով հաջորդ հանդիպումն ամռանը անցկացնել Բաթումում:

Մայիսին Զաքիր Հասանովի պատվիրակությունը մեկնեց Թուրքիա՝ ներկա գտնվելու Իզմիրում անցկացվող *Efes*-2016 միջազգային վարժանքների եզրափակիչ փուլին: Այստեղ նա բարձրաստիճան դիտորդների հետ միասին այցելեց Զորավարժությունների ղեկավարման կենտրոն և զենքի ցուցահանդես: *Efes*-2016 զորավարժություններին ընդհանուր առմամբ մասնակցել է 9 երկիր, Ադրբեջանն այդ զորավարժություններում ներգրավվել է 30 զինծառայողով:

Մայիսի 30-ին Քոնիայում մեկնարկեցին *Anadolu Kartalı*-2016 («Անատոլիական արծիվ») զորավարժությունները, որոնց մասնակցում են 7 երկրների (Իտալիա, Նիդեռլանդներ, Ավստրալիա, Սաուդյան Արաբիա, Պակիստան, Թուրքիա, Ադրբեջան) զինված ուժերի ներկայացուցիչներ: Ադրբեջանի ՊՆ-ը հայտնել է, որ Ադրբեջանը դրանցում ներկայացված է ռազմաօդային ուժերի 3 օդաչուով:

Մայիսին Թուրքիայի խորհրդարանի արտաքին հարցերով հանձնաժողովը հայտարարություն տարածեց, որում ընդգծեց Թուրքիա-Վրաստան հարաբերությունների ռազմավարական և օրինակելի լինելը, ինչպես նաև եվրատլանտյան տարածաշրջանի կայունության և անվտանգության ապահովման գործընթացում Վրաստանի կարևոր դերը: Հանձնաժողովն աջակցություն հայտնեց Վրաստանի տարածքային ամբողջականությանը, Վրաստան-ՆԱՏՕ էական փաթեթի ամբողջական իրագործմանը և կոչ արեց Վարշավայում կայանալիք ՆԱՏՕ գագաթաժողովում անել ուժեղ հայտարարություններ:

Մայիսին Էրդողանը հայտարարեց, թե Թուրքիան մտադիր է կտրուկ մեծացնել Ադրբեջանից գնվող գազի ծավալը. «Ներկայումս մենք գնում ենք 6-7 մլրդ մ^3, սակայն մտադիր ենք այդ ծավալը հասցնել մինչև 20-30 մլրդ մ^3-ի: Մենք արագացրել ենք Անդրանատոլիական գազատարի (*TANAP*) նախագծի աշխատանքները, իսկ Բաքու-Թբիլիսի-Կարս (ԲԹԿ) երկաթուղին շահագործման կհանձնվի մինչև տարեվերջ»: Թուրքիայի տրանսպորտի նախարար Ահմեթ Արսլանը հույս հայտնեց, որ ԲԹԿ կառուցումը կավարտվի այս տարի. «ԲԹԿ կառուցման նախագիծը կարևոր է Թուրքիայի և ողջ տարածաշրջանի համար: ԲԹԿ-ն կնպաստի Կարսը Թուրքիայի առևտրի կենտրոնի վերածելուն: ԲԹԿ-ն իր ներդրումը կունենա ոչ միայն Կարսի, այլև Արդահանի ու Իգդիրի նահանգների համար: Կարսը ճեպընթաց գնացքով կկապվի Անկարայի, (Իգդիրի միջոցով) Նախիջևանի և Արդահանի հետ: Ավտոճանապարհների զարգացման հետ մեկտեղ դա կփոխի տարածաշրջանի դեմքը»:

Մայիսին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը մեկնեց Ստամբուլ՝ մասնակցելու ՄԱԿ մարդասիրական հարցերով գագաթաժողովին: Իր ելույթում նա արծարծեց ԼՂ և Մեծամորի ատոմակայանի հարցերը: Գագաթաժողովին մասնակցել է նաև Վրաստանի նախագահ Գեորգի Մարգվելաշվիլին, որը հանդիպել է Էրդողանի հետ: Թուրքիայի նախագահը հերթական անգամ աջակցություն է հայտնել Վրաստանի տարածքային ամբողջականությանը և անկասկած է համարել, որ Վրաստանը կդառնա ՆԱՏՕ անդամ: Քննարկվել է նաև ԲԹԿ հարցը:

Ալիևի թուրքական այցից հետո հասարակական-քաղաքական հարցերով նրա օգնական Ալի Հասանովը հայտարարեց, որ Բաքուն պատրաստ է նպաստել Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերությունների բարելավմանը,

որոնց միջև լարվածությունը չի կարող չանհանգստացնել Ադրբեջանին։ Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը հայտարարեց, որ Հարավային Կովկասի տարածաշրջանում և նրա սահմաններից դուրս կայունության և անվտանգության պահպանման համար կարևոր դեր խաղացող Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերությունների ներկա վիճակը ցանկալի չէ Ադրբեջանի համար, և որ Ադրբեջանը նախկինի նման հետաքրքրված է երկու երկրների հետ իր հարաբերությունների ընդլայնմամբ։

ԱԴՐԲԵՋԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. մայիս

Անուշավան Բարսեղյան[*]

Ադրբեջանի արտաքին հարաբերություններում հետզհետե ավելանում է ռազմական համագործակցության բաղադրիչը, ինչը հատկապես նշանակալի է դառնում ԱՀ ավանդական գործընկեր երկրների հետ կապերում: Սեփական ռազմարդյունաբերության զարգացմանն ուղղված քայլերին զուգահեռ՝ ԱՀ-ը փորձում է ռազմական համագործակցության, այդ թվում համատեղ զինավարժությունների, կրթական ծրագրերի և սպառազինությունների գնման միջոցով բարձրացնել ԱՀ ԶՈՒ պատրաստվածության մակարդակը և ապահովել տեխնիկական հագեցածությունը: Ռազմական համագործակցությունը նպաստում է նաև գործընկեր երկրների հետ քաղաքական հարաբերությունների ամրապնդմանը:

Ռազմական համագործակցություն. Մայիսի կեսերին ԱՀ Գաբալա քաղաքում կայացել է Վրաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի պաշտպանության նախարարների հերթական հանդիպումը, որի ընթացքում կողմերը շեշտել են տարածաշրջանում կայունության պահպանման ուղղությամբ, ինչպես նաև ռազմական կրթության և կիբեռանվտանգության բնագավառներում եռակողմ համագործակցության կարևորությունը: Ըստ Վրաստանի ԶՈՒ ԳՇ պետ Վ.Կապանաձեի, համաձայնություն է ձեռք բերվել 2017թ. ամռանը Վրաստանի տարածքում Ադրբեջանի և Թուրքիայի հետ համատեղ զորավարժության անցկացման մասին:

Վրաստանի իշխանությունները հակված են այն կարծիքին, որ ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների սերտացման, հետագայում նաև անդամակցության համար անհրաժեշտ է մեծացնել Անկարայի հետ ռազմական համագործակցությունը: Այս համատեքստում Թուրքիայի դերակատարությունը շեշտելու նպատակով Վրաստանի պաշտպանության նախարար Թ.Խիդաշելին հայ-

[*] «Նորավանք» ԳԿՀ քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ:

տարարել է, թե «Թուրքիան ՆԱՏՕ անդամ երկրներից միակն է, որն անվերապահորեն կողմ է Հյուսիսատլանտյան դաշինքի հետ Վրաստանի ինտեգրմանը»: Հաշվի առնելով նաև Թուրքիայի և Ադրբեջանի եղբայրական հարաբերությունները, Վրաստանի և Ադրբեջանի ռազմավարական գործընկերությունը՝ նշված երեք երկրների միջև ուրվագծվում են ռազմական սերտ եռակողմ համագործակցության կայուն հիմքեր, ինչին նպաստում են նաև այլ երկրների կողմից տարածաշրջանում ռուսական ազդեցության նվազեցման ուղղությամբ գործադրված ջանքերը:

Թուրքիայի հետ զարգացող ռազմական համագործակցության համատեքստում կարելի է դիտել Իզմիր քաղաքում մայիսի 15-ից մինչև հունիսի 1-ն անցկացված ***EFES-2016*** միջազգային զորավարժություններին Ադրբեջանի ԶՈՒ մասնակցությունն ԱՄՆ, Գերմանիայի, Սաուդյան Արաբիայի և Կատարի ԶՈՒ ներկայացուցիչների հետ:

Ադրբեջանական լրատվամիջոցները, հղում անելով պաշտոնական աղբյուրներին, հայտնում են ՌԴ-ից մատակարարվող զինտեխնիկայի նոր խմբաքանակների մասին: Մասնավորապես, ԱՀ-ին են փոխանցվում 120 մմ-անոց ինքնագնաց հրետանային *«Вена»* հրանոթներ, ռուս մասնագետների մասնակցությամբ իրականացվում են զինտեխնիկայի տեխնիկական աջակցության ապահովման, ըստ նշանակության օգտագործման, ինչպես նաև անձնակազմի ուսուցմանն ուղղված աշխատանքներ: Նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ ընթանում է օգտագործվող սպառազինության և զինտեխնիկայի փուլային արդիականացում:

Մայիսին ԱՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, ԶՈՒ գլխավոր շտաբի պետ Ն.Սադիկովը հանդիպել է պաշտոնական այցով Բաքվում գտնվող՝ Եվրոպայում ԱՄՆ ցամաքային զորքերի հրամանատար Ֆ.Բեն Հոջեսի գլխավորած պատվիրակության հետ: Քննարկվել են տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակի, ռազմական կրթության, փորձի փոխանակման և հնարավոր համատեղ զորավարժությունների հետ կապված հարցեր: Ֆ.Բեն Հոջեսը նշել է, որ համապատասխան առաջարկի դեպքում ԱՄՆ զինծառայողները կարող են ժամանել ԱՀ, մասնակցություն ունենալ համատեղ զինավարժություններում և ձեռք բերել տարածաշրջանին բնորոշ փորձ:

Իրանի հետ բազմաբնույթ կապերին զուգընթաց՝ կարծես ուրվագծվում են նաև ռազմական համագործակցության որոշակի տարրեր: Իրանի ռազմա-

ծովային ուժերի հրամանատար Գ.Բիլկամի հայտարարության համաձայն՝ Իրանը և Ադրբեջանն ունեն սերտ հարաբերություններ և այժմ աշխատում են Կասպից ծովում կասպիական տարածաշրջանի երկրների մասնակցությամբ համատեղ զորավարժությունների անցկացման համաձայնագրի վրա: Հարկ է նշել, որ մոտ մեկ տարի առաջ ԱՀ պաշտպանության նախարար Զ.Հասանովի թեհրանյան այցի ընթացքում Իրանը և Ադրբեջանը որոշում են ընդունել համատեղ պաշտպանական հանձնաժողովի ստեղծման մասին:

Մայիսին Ադրբեջանի արտաքին հարաբերությունների առավել ուշագրավ այլ զարգացումները կապված են Իրանի, Վրաստանի և Եվրոպայի հետ:

Ադրբեջան-Իրան. Իրանա-ադրբեջանական ակտիվացող տնտեսական համագործակցության համար նոր հնարավորություններ է ստեղծում Ադրբեջանի և Իրանի երկաթուղիների միացման մասին կնքված համաձայնագիրը: Աշխատանքներ են տարվում Իրանի և Հվ.Կովկասի (Ադրբեջան, Վրաստան) երկրների տարածքով դեպի ԵՄ գնացող տարանցիկ երթուղու ստեղծման ուղղությամբ, ինչի մասին հայտարարել է «Իրանական երկաթուղիներ» ընկերության պաշտոնական ներկայացուցիչ Հ.Աշուրին: Երթուղին ներառելու է ինչպես երկաթուղային, այնպես էլ ավտոմոբիլային ճանապարհները և ծառայելու է դեպի ԵՄ ապրանքների հատուկ տարանցման համար՝ շրջանցելով Թուրքիան: Ըստ իրանցի պաշտոնյայի, այս հարցի շուրջ արդեն պայմանավորվածություն է ձեռք բերվել Ադրբեջանի և Վրաստանի հետ, ծրագրվում է նաև Ռուսաստանի և Ֆինլանդիայի մասնակցությունը:

Չնայած Ադրբեջանի և Իրանի միջև վերընթաց զարգացող քաղաքական, տնտեսական և ռազմական կապերին, երկու երկրների միջև առկա են որոշակի տարաձայնություններ մի շարք խնդիրների շուրջ: Մասնավորապես, դրանք վերաբերում են երկու երկրների համար կարևոր նշանակություն ունեցող Կասպից ծովի բաժանման հարցին: Իրանական լրատվամիջոցներում այս հարցի շուրջ պարզաբանումներ է տվել միջազգային ծովային իրավունքի փորձագետ Բ.Դիբան՝ ներկայացնելով այս հարցում Իրանի գլխավոր պահանջները. չի կարող լինել Կասպից ծովի ոչ մի իրավական ռեժիմ առանց Իրանի համաձայնության, Իրանը դեմ է մոդիֆիկացված միջնագծի սկզբունքին (*MML*), քանի որ այն Իրանի բաժինը դարձնում է ամենափոքրը, Թեհրանը դեմ է Կասպից ծովի հատակով նավթատարների, գազատարների անցկացմանը և կասպիական հարցերում ոչ տարածաշրջանային երկրների մաս-

նակցությանը: Ի դեպ, Կասպից ծովի հատակով խողովակաշարերի կառուցման դեմ է արտահայտվել նաև ՌԴ ԱԳՆ հատուկ հանձնարարություններով դեսպան Ի.Բրատչիկովը՝ ընդգծելով այդ ուղղությամբ իրականացվող միակողմանի գործողությունների անթույլատրելիությունը:

Ադրբեջանի անկախացումից ի վեր Իրանի նկատմամբ Բաքվի տարածքային նկրտումները քողարկված բացասական հետք են թողնում երկու երկրների փոխհարաբերություններում: Տարբեր ուժերի կողմից այսպես կոչված «Հվ.Ադրբեջանի» թեման մերթընդմերթ ասպարեզ է բերվում հիմնականում Իրանում անկայունություն և միջէթնիկ լարվածություն առաջացնելու նպատակով: Այս տեսանկյունից կարելի է դիտարկել մայիսի 23-24-ին Ստամբուլում Հումանիտար հարցերի համաշխարհային գագաթաժողովի[1] շրջանակներում անցկացված «Թյուրքական աշխարհի ոսկե կամուրջ. Հարավային Ադրբեջան» գիտաժողովը, որը կազմակերպվել էր «Հվ.Ադրբեջանի ազգային վերածննդի շարժման» (ՀԱԱՎՇ)[2] և «*Ülkü Ocakları*»[3] («Իդեալիստական օջախներ») ուլտրաազգայնական կազմավորման կողմից: Գիտաժողովի ընթացքում բանախոսները տեղեկատվություն են հաղորդել «Հվ.Ադրբեջանի» մասին և ընդգծել հարցի կարևորությունը, ցուցադրվել է վերոնշյալ շարժման առաջնորդ, «Հվ.Ադրբեջանի անկախության համար պայքարող» Մահմուդալի Չեհրեգանիի 15 րոպեանոց տեսաուղերձը: Մասնակիցներն ընդգծել են «Հվ.Ադրբեջանի» վրա ԱՀ ազդեցության մեծացման անհրաժեշտությունը և «Միացյալ Ադրբեջանի» ստեղծումը կարևորել որպես դեպի «Թուրան» տանող ճանապարհ:

Ամիսն ուշագրավ էր նաև Ադրբեջանի փոխարտգործնախարար Արազ Ազիմովի հակահրանական հայտարարությամբ՝ արված Իսրայելի Կնեսետի արտաքին գործերի և պաշտպանության հարցերով հանձնաժողովի նախագահ Ց.Անեգբիի հետ հանդիպման ժամանակ: Ա.Ազիմովը փաստացի մեղադ-

[1] Գագաթաժողովին մասնակցել է նաև ԱՀ նախագահ Ի.Ալիևը:

[2] ՀԱԱՎՇ-ը ստեղծվել է Իրանում 1990թ., Թավրիզի համալսարանի պրոֆեսոր Մահմուդալի Չեհրեգանիի կողմից, սակայն առավել հայտնի է դարձել 1996-ից: Սկզբնական շրջանում չափավոր պահանջներ ներկայացնող Մ.Չեհրեգանին Իրանից արտաքսվելուց հետո արտերկրում (Ադրբեջան, Թուրքիա, ԱՄՆ) կարծրացրեց իր դիրքորոշումը: Իրանի դեմ գործողություններում տարբեր ժամանակահատվածներում ՀԱԱՎՇ-ը աջակցություն է ստացել Ադրբեջանից, Թուրքիայից և ԱՄՆ-ից:

[3] Կարսի դատարանը մայիսի 25-ին 6 ամսվա ազատազրկման է դատապարտել «Ուլքու օջաքլար» («Իդեալիստական օջախներ») ուլտրաազգայնական կազմավորման (առավել հայտնի է որպես «Գորշ գայլեր») Կարսի մասնաճյուղի ղեկավար Թոլգա Ադրգուզելին՝ «ժողովրդի որոշակի հատվածի նկատմամբ ատելություն սերմանելու» համար: Նրա դեմ դատական հայցը ներկայացրել էր Թուրքիայի Ժողովուրդների դեմոկրատիա քրդամետ կուսակցության հայազգի պատգամավոր Գարո Փայլանը:

բանք է հնչեցրել Թեհրանի հասցեին՝ պնդելով, որ «Իրանը չի հրաժարվել իր միջուկային ծրագիրը զարգացնելուց, այլ հետաձգել է այդ ծրագրի որոշ հատվածների իրականացումը»:

Իրանական լրատվամիջոցներն անդրադարձել են Իրանում Ադրբեջանի նորանշանակ դեսպան Բ.Հուսեյնովի նախկին գործունեությանը: Ըստ այդ հրապարակումների, վերջինս համակարգել է ԱՀ նախկին ԱԱՆ հակահրանական գործունեությունը և 2009-2015թթ. ճնշումներ գործադրել Բաքվում գործունեություն ծավալող իրանցի գործարարների և ուսանողների նկատմամբ, խոչընդոտներ է ստեղծել իրանական լրատվամիջոցների ներկայացուցիչների և մշակութային գործիչների համար, հող է նախապատրաստել իմամ Խոմեյնիի անվան բարեգործական կոմիտեի գործունեության կասեցման համար:

Ադրբեջան-Վրաստան. Բաքու-Սուփսա նավթախողովակի[4] 20-ամյակին նվիրված միջոցառմանը մասնակցելու նպատակով Թբիլիսի ժամանած ԱՀ վարչապետ Ա.Ռասիզադեին ընդունել են Վրաստանի նախագահ Գ.Մարգվելաշվիլին և վարչապետ Գ.Կվիրիկաշվիլին: Հանդիպումների ընթացքում երկուստեք ընդգծվել է արևելքից արևմուտք ձգվող էներգետիկ միջանցքի կարևորությունը, որը հիմք է դարձել երկու երկրների հետագա ռազմավարական համագործակցության համար, քննարկվել են էներգետիկայի և տրանսպորտի ոլորտներում համատեղ նախագծերի իրականացման հետ կապված հարցեր:

Ադրբեջանի և Վրաստանի մասնակցությամբ իրականացվող համատեղ մյուս նախագիծը, որը նույնպես նպաստում է համագործակցության ընդլայնմանը, Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին է[5], որի շինարարական աշխատանքների ավարտման և երկաթուղու շահագործման վերջնաժամկետը, մի քանի անգամ հետաձգելուց հետո, սահմանվել է 2016թ. տարեվերջը: Ըստ «Ադրբեջանական երկաթուղիներ» ընկերության նախագահ Ջ.Գուրբանովի, գրեթե պատրաստ է Վրաստանում երկաթուղու 183 կիլոմետրանոց հատվածը[6], սակայն շի-

[4] Նախկինում Վրաստանի իշխանությունները հույս ունեին, որ Բաքու-Սուփսան կդառնա կասպիական նավթը Եվրոպա տեղափոխելու հիմնական ուղին, սակայն հիմնականում Թուրքիայի, ԱՄՆ-ի և Ադրբեջանի ջանքերով գործարկված Բաքու-Ջեյհան խողովակաշարը այն երկրորդ պլան մղեց:

[5] Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին կառուցվում է վրաց-ադրբեջանա-թուրքական միջպետական համաձայնագրի հիման վրա: Ադրբեջանը վրացական հատվածի շինարարության համար Թբիլիսիին հատկացրել է $775 մլն վարկ:

[6] Նշենք, որ Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղային մայրուղու նախագիծը սկսվել է 2007թ. և ապահովում է Վրաստանի տարածքում Մարաբդա-Ախալքալաք 178 կիլոմետրանոց գծի վերականգնողական վերակառուցումը, Ախալքալաք կայարանից մինչև Կարսի կայարան նոր երկաթուղային գծի շինարարությունը, ընդհանուր 98 կմ երկարությամբ: Այս տարածքից Վրաստանի ուղղությամբ գտնվում է 30 կիլոմետր երկարությամբ Ախալքալաք-Կարծախ (Թուրքիայի սահման) երկաթուղային մայրուղին, իսկ Թուրքիայի կողմից՝ Կարծախ-Կարս 68 կիլոմետրանոց հատվածը:

նարարական աշխատանքները դանդաղում են թուրքական հատվածում: Վրացական հատվածում առկա որոշակի դժվարությունները կասկածի տակ են դնում Ջ.Գուրբանովի հավաստիացումներն առ այն, որ այդ մասում շինարարությունը կավարտվի 2016թ. վերջին: Մասնավորապես, խոսքը վերաբերում է դեռևս չկառուցված 32 ուղի երկաթուղային ռելսերին (յուրաքանչյուրը՝ 3 կմ), եվրոպական ուղու անցումային գծերի վայրում և աշխատուժի վճարման հետ կապված խնդիրներին (վերջին 4 ամսվա աշխատավարձը չի տրվել):

Ադրբեջան-Եվրոպա. Մայիսի 17-ին ԵՄ-ի կողմից Տրանսադրիատիկ գազատարի (*TAP*)[7] շինարարության մեկնարկի մասին է հայտարարել Եվրահանձնաժողովի պաշտոնական ներկայացուցիչ Մ.Սխինասը[8]: Ըստ նրա, Եվրոպան նախատեսում է այս գազատարով 2019-2020թթ. սկսած՝ ստանալ տարեկան 10 մլրդ մ³ գազ, ինչը, տարբեր գնահատականների համաձայն, կազմում է Եվրոպայի ընդհանուր պահանջարկի մոտ 10%-ը: Այս գազատարը հանդիսանում է Հարավային գազային միջանցքի բաղկացուցիչ մասը, որով նախատեսվում է Եվրոպա արտահանել ադրբեջանական գազը 1.2 տրլն հաստատված գազի պաշարներ ունեցող «Շահ դենիզ» հանքավայրից: Ադրբեջանական գազը Եվրոպայում հիմնականում մրցակցելու է ռուսականի հետ: 2015թ. ՌԴ-ն Եվրոպային (այդ թվում Թուրքիային) մատակարարել է 158.6 մլրդ մ³ գազ, որը կազմել է Եվրոպայի պահանջարկի մոտ 31%-ը: Միաժամանակ, Գազպրոմը մինչև 2019թ. ավարտը նախատեսում է 55 մլրդ մ³ թողունակությամբ գազատարի կառուցումը Բալթիկ ծովի հատակով դեպի Գերմանիա, ինչպես նաև «Պոսեյդոն» նախագծի իրականացումը, որով Սև ծովով Հունաստան կհասցնի տարեկան 12 մլրդ մ³ գազ:

Չնայած ռուս-ադրբեջանական մրցակցությանը Եվրոպայում, Ադրբեջանը 2015թ. սեպտեմբերից գազ է գնում ՌԴ-ից (տարեկան 2 մլրդ մ³): *SOCAR*-ի ղեկավար Ռ.Աբդուլաևի հայտարարության համաձայն, ԱՀ-ն նույնիսկ դիմել է «Գազպրոմին» տարեկան ծավալները մինչև 3-5 մլրդ մ³ հասցնելու առաջարկով:

Հարավային գազային միջանցքով Եվրոպա գազ արտահանելու համար Ադրբեջանը ներկայում բանակցություններ է վարում Թուրքմենստանի հետ: Այս մասին հայտարարել է ԱՀ էներգետիկայի նախարար Ն.Ալիևը:

[7] *TAP*-ը թուրք-հունական սահմանից անցնում է Հունաստան, Ալբանիա և Իտալիայի հարավ, կազմում է 878 կմ, որի 105 կմ-անոց հատվածն անցնում է Ադրիատիկ ծովով. ընդհանուր արժեքը՝ $6 մլրդ:
[8] Հատուկ ուղերձով *TAP* նախագծին իր անվերապահ աջակցությունն է հայտնել նաև ԱՄՆ պետքարտուղար Ջ.Քերին:

Ադրբեջանը շարունակում է արտերկրյա գիտական և փորձագիտական շրջանակները քարոզչական նպատակներով օգտագործելու իր քաղաքականությունը[9]:

Օքսֆորդի համալսարանի Նիզամի Գյանջևի գիտական կենտրոնի ղեկավար Նարգիզ Փաշաևան (Մեհրիբան Ալիևի քույրն է) ԵԽԽՎ-ում Ադրբեջանի համազեկուցող, բրիտանացի լորդ Մալքոլմ Բրյուսի հետ համատեղ Լոնդոնում հիմնել է *The British Foundation for the study of Azerbaijan and the Caucasus* (Ադրբեջանի և Կովկասի հետազոտության բրիտանական հիմնադրամ) կազմակերպությունը: Հիմնադիրներ են նաև Մ.Բրիտանիայի կողմից Ն.Գյանջևի կենտրոնի ղեկավար, Նյու Յորքի համալսարանի Հին պատմության ինստիտուտի պրոֆեսոր Ռոբերտ Հոյլանդը և Անգլիա-Ադրբեջան ընկերակցության համանախագահ, Լորդերի պալատի անդամ Մայքլ Գերմանը:

Նորաստեղծ հիմնադրամի աշխատանքներում ներգրավված կլինեն նաև Շոտլանդիայի Սենտ Էնդրյու համալսարանի պրոֆեսոր Էնդրյու Պիկոկը և Էկսետերի համալսարանի պրոֆեսոր, շիականության պատմության հետազոտող Ռոբերտ Գլիվը: Նշված գիտնականներն այսուհետև հանդիսանալու են կազմակերպության հոգաբարձուների խորհրդի անդամներ, որի նախագահ է ընտրվել Ն.Փաշաևան: Հիմնադրամը նպատակ ունի ամրապնդել ԱՀ և Մ.Բրիտանիայի միջև կապերը գիտության, կրթության և մշակույթի ոլորտներում, համագործակցություն հաստատել Մ.Բրիտանիայի քաղաքական կազմակերպությունների և ԶԼՄ-ի հետ, ակտիվացնել աշխատանքները Մ.Բրիտանիայում ադրբեջանական համայնքի և ադրբեջանցի ուսանողների հետ:

[9] Արտերկրում ստեղծված կառույցների, ինչպես նաև օտարերկրյա հետազոտական կենտրոնների ֆինանսավորման, համագործակցության ձևերի, նպատակների և համատեղ գործունեության մասին առավել մանրամասն տե՛ս *Ա.Բաբսեղյան,* «Ադրբեջանական քաղաքականությունը փորձագիտական տիրույթում», «21-րդ ԴԱՐ», #6, 2015թ.:

ՎՐԱՍՏԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. մայիս

Ջոնի Մելիքյան*

Վրաստանի արտաքին քաղաքականությունը մայիսին պակաս ակտիվ էր նախորդ ամսվա համեմատ, բայց և այնպես, հագեցած էր միջազգային պաշտոնական և աշխատանքային այցերով: Տեղի ունեցան գագաթաժողովներ, գիտաժողովներ, ինչպես նաև բիզնես համաժողովներ (Հակակոռուպցիոն գագաթաժողով Լոնդոնում, Տրանսադրիատիկական գազատարի շինարարություն, այցելություն Ֆրանսիա), որոնցում Վրաստանը ներկայացված էր երկրի ղեկավարության և կառավարության անդամների մակարդակով: Իրենց հերթին, Վրաստան են այցելել ինչպես պետությունների ղեկավարներ (Սլովակիայի նախագահը), այնպես էլ եվրոպական կառույցների (Եվրոպայի խորհուրդ և այլն) ղեկավարներ, ինչը համապատասխանում է եվրոպական և եվրատլանտյան կառույցներին պաշտոնական Թբիլիսիի հայտարարած ինտեգրման տրամաբանությանը:

Վրաստանը և տարածաշրջանային էներգետիկ, ենթակառուցվածքային նախագծերը. Էներգետիկ և ռազմաքաղաքական ուղղությունները մայիսին հիմնականն են եղել Վրաստանի արտաքին քաղաքականությունում: «Արևելք-Արևմուտք» էներգետիկ միջանցքի (Բաքու-Սուփսա 830 կմ խողովակաշար, թողունակությունը՝ տարեկան 7 մլն տ նավթ կամ օրական 140 հազ. բարել) 20-ամյա հոբելյանի շրջանակներում մայիսի 16-ին Վրաստան այցելեց Ադրբեջանական Հանրապետության վարչապետ Արթուր Ռասիզադեն: Վրաստանի կառավարությունում ադրբեջանցի հյուրին ընդունեց վարչապետ Գ.Կվիրիկաշվիլին, որը նրա հետ քննարկեց վրաց-ադրբեջանական հարաբերությունների օրակարգի հիմնական հարցերը, ինչպես նաև տարբեր ոլորտներում համագործակցության հետագա զարգացման հեռանկարները: Հանդիպմանը ներկա էին Վրաստանի փոխվարչապետ, էներգետիկայի նախարար Կախի Քալաձեն, փոխվարչապետ, էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարար Դմիտրի

* «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:

Կումսիշվիլին, Ադրբեջանի էներգետիկայի նախարար Նաթիգ Ալիևը և Ադրբեջանի նավթային պետական ընկերության նախագահ Ռովնաղ Աբդուլաևը:

Մայիսի 17-ին Հունաստանում, Սալոնիկ քաղաքում տեղի ունեցավ Տրանսադրիատիկական գազատարի (*TAP*) կառուցումն սկսելու արարողությունը, որը 2019թ. 800 կմ-անոց գազատարով միմյանց կկապի Հունաստանն ու Իտալիայի հարավը, որով նախատեսվում է ադրբեջանական գազը հասցնել Եվրոպա (թողունակությունը՝ տարեկան 16 մլրդ մ^3, ներդրումների ծավալը գնահատվում է $45 մլրդ, որից $2 մլրդ-ն ներդրվելու է Վրաստանում): Վրացական պատվիրակությունը՝ երկրի վարչապետի գլխավորությամբ, աշխատանքային այցով մեկնեց Հունաստան՝ մասնակցելու այդ միջոցառմանը: Վրաստանի կառավարության ղեկավարը հանդիպեց Հունաստանի վարչապետ Ալեքսիս Ցիպրասի հետ: Քննարկվեցին երկկողմ համագործակցության հարցեր և Տրանսադրիատիկական խողովակաշարի անցկացման նախագիծը: Ըստ Գ.Կվիրիկաշվիլու՝ նախագիծը նպաստելու է էներգաանվտանգության ամրապնդմանը և տնտեսական համագործակցության խորացմանը: Վրաստանի կառավարության աշխատակազմի տեղեկատվությամբ՝ Ալեքսիս Ցիպրասը մեկ անգամ ևս Հունաստանի ամուր աջակցությունն է հայտնել Վրաստանի եվրոպական ընտրությանը և նշել, որ Վրաստանը ԵՄ հուսալի գործընկերն է: Վրացական պատվիրակության կազմում էին փոխվարչապետ, էներգետիկայի և բնական պաշարների նախարար Կախի Քալաձեն և ԱԳՆ ղեկավար Միխայիլ Ջանելիձեն:

Բեռնափոխադրումների ոլորտում մայիսի կեսին Բաքվում տեղի ունեցած եռակողմ հանդիպման («Ղազախստան թեմիր ժոլի» ԲԸ ղեկավար Ասկար Մամինի, «Ադրբեջանական երկաթուղիներ» ՓԲԸ ղեկավար Ջավիդ Գուրբանովի և «Վրացական երկաթուղիներ» ԲԸ ղեկավար Մամուկա Բախտաձեի միջև) ժամանակ պայմանավորվածություն ձեռք բերվեց ավելացնել Տրանսկասպյան միջազգային տրանսպորտային երթուղով բեռնափոխադրումների ծավալները: Երթուղին անցնում է Չինաստանով, Ղազախստանով, Ադրբեջանով, Վրաստանով, այնուհետև՝ Թուրքիայով դեպի Ուկրաինա և ԵՄ երկրներ: «Ադրբեջանական երկաթուղիներ» ՓԲԸ մամուլի ծառայության ղեկավար Նադիր Ազմամեդովի տեղեկատվությամբ՝ խոսք է եղել նաև մրցունակ սակագների սահմանման, Աքթաու-Կուռիկ-Ալյաթ-Աքթաու երթուղով լաստանավերի

աշխատանքի արդյունավետության բարձրացման, երկաթուղային մեքենաշինության արտադրանքի արտադրության և մատակարարումների ոլորտում համագործակցության զարգացման մասին: Մայիսի 17-ին Թբիլիսիում տեղի է ունեցել Տրանսկասպյան միջազգային տրանսպորտային երթուղու զարգացման համակարգող կոմիտեի նիստը:

Վրաստան-Ադրբեջան-Թուրքիա ռազմական համագործակցություն. Ինչպես և սպասվում էր, մայիսի 15-ին ադրբեջանական Գաբալայում տեղի ունեցավ Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի պաշտպանության նախարարների չորրորդ հանդիպումը: Այս ձևաչափը նոր չէ և գործում է 2014թ. օգոստոսից: Նախնական պայմանավորվածությունների համաձայն՝ եռակողմ այս հանդիպումները պետք է տեղի ունենան տարին երկու անգամ, բայց վերջին հանդիպումը կայացել է որոշակի դադարից հետո:

Եռակողմ հանդիպումից առաջ Վրաստանի պաշտպանության նախարար Թինաթին Խիդաշելին երկկողմ հանդիպումներ ունեցավ Ադրբեջանի և Թուրքիայի իր պաշտոնակիցների՝ Զաքիր Հասանովի և Իսմեթ Իլմազի հետ: Քննարկվել են երկկողմ համագործակցության ակտիվացման և տարածաշրջանային անվտանգության հարցեր: Վրաստանի պաշտպանության նախարարության տեղեկատվությամբ՝ ադրբեջանցի իր պաշտոնակցի հետ հանդիպման ժամանակ Թինաթին Խիդաշելին Բաքվին առաջարկել է օգտվել երկրում գործող ՆԱՏՕ և Վրաստանի Համատեղ մարզավարժանքային և գնահատման կենտրոնից (*JTEC*), ինչպես նաև Վրաստանի պաշտպանության ինստիտուցիոնալ շինարարության ՆԱՏՕ դպրոցից (*DIB*): Թուրքիայի պաշտպանության նախարարի հետ հանդիպման ժամանակ Վրաստանի պաշտպանության նախարարը քննարկել է տարածաշրջանային անվտանգության, Թուրքիայի կողմից ՆԱՏՕ-ին Վրաստանի ինտեգրմանն աջակցելու հարցեր, ինչպես նաև Սևծովյան անվտանգության կոնֆերանսի նախագիծը:

Պաշտպանական գերատեսչությունների ղեկավարները նախատեսել են իրականացնել նաև մի շարք միջոցառումներ, որոնց մի մասը մինչև տարեվերջ տեղի է ունենալու Վրաստանում, մի մասը՝ Անկարայում, մի մասն էլ՝ Բաքվում: «Խոսակցությունը եռակողմ ձևաչափով վարժանքների մասին էր: Վրաստանը ցանկություն հայտնեց, որ 2017թ. մի քանի այդպիսի զորավարժություններ անցկացնի: Մենք դրա համար համաձայնություն ստացել ենք,

այնպես որ մենք 2017թ. գարնանը կպատրաստվենք... կաշխատենք համատեղ զորավարժություններ անցկացնելու և կրթական ծրագրերի ուղղությամբ»,- ընդգծել է Խիդաշելին։

Գաբալայի հանդիպման հիմնական արդյունքների վերաբերյալ նշենք, որ Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի պաշտպանական գերատեսչությունների ղեկավարների պայմանավորվածությունները կարելի է հանգեցնել հետևյալ երեք կետերին. 1. համագործակցություն կիբեռանվտանգության և էներգաանվտանգության ոլորտներում (նավթատարների և գազամուղների պաշտպանություն), 2. երեք երկրների ԶՈՒ մարտունակության և մարտական պատրաստվածության բարձրացում ռազմական կրթության ոլորտում (ծրագրեր և նախագծեր) համագործակցության ճանապարհով, 3. փոխըմբռնման հուշագրի ստորագրման հնարավորություն երեք երկրների պաշտպանության նախարարությունների միջև (Բաթումում ամռանը կայանալիք նախարարների հանդիպման ժամանակ)՝ դրանց հետագա համագործակցության իրավական հիմքի ստեղծման նպատակով։

Վերը նշված բոլոր կետերը ցույց են տալիս, որ Վրաստանը հարևան պետությունների հետ պաշտպանության ոլորտում կարող է դուրս գալ փոխհարաբերությունների նոր մակարդակ, ինչը կարող է միջնորդավորված ձևով անդրադառնալ Հայաստանի Հանրապետության անվտանգային միջավայրի վրա։ Վրացի որոշ փորձագետներ շտապեցին հայտարարել, թե պաշտպանության ոլորտում փոխըմբռնման հուշագրի հնարավոր ստորագրումը, ինչպես նաև էներգաանվտանգության ապահովման շուրջ համագործակցությունը երեք երկրների միջև կարող է դառնալ այսպես կոչված «այլընտրանք» ՆԱՏՕ մտնելուն և հետագայում կարող է վերաճել ռազմական դաշինքի։ Սակայն նման հեռահար վերլուծություններն առայժմ հիմնավորված չեն, քանի որ պաշտոնական Թբիլիսին դեռևս շարունակում է ցուցադրաբար, երկրի ղեկավարության մակարդակով, հայտարարել արտաքին քաղաքականությունում եվրոպական ու եվրատլանտյան վեկտորի անայլընտրանքայնության մասին։ Այս գաղափարին թերահավատորեն է վերաբերվում նաև ռազմական փորձագետ Վախթանգ Մահիսայան, ըստ որի՝ խոսքը ռազմական դաշինքի մասին չէ, քանի որ երեք երկրների առջև չի դրված հավաքական պաշտպանության հարցը, և ընդհանրապես, նրանցից յուրաքանչյուրն իր «թշնամին» ունի։

Այնուամենայնիվ, Մաիսայան չի բացառում, որ իրավիճակը կարող է փոխվել, և պաշտոնական Թբիլիսիի գերակայությունները կարող են վերանայվել: Մեր կարծիքով՝ նման բան կարող է տեղի ունենալ այն դեպքում, երբ Բրյուսելը (ՆԱՏՕ-ն և ԵՄ-ը) կորցնեն հետաքրքրությունը Հարավային Կովկասի հանդեպ և, որպես հետևանք, արգելակվեն Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման գործընթացները, ինչը կարող է հիասթափություն և եվրա-թերահավատություն առաջ բերել երկրում: Միայն այդ պարագայում երկրի արտաքին քաղաքականության վեկտորը կարող է վերանայվել և փոխվել:

ԻՐԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. մայիս

Ռոման Կարապետյան*

Իրանի արտաքին քաղաքականության հիմնական շեշտադրումները մայիսին ուղղված էին ասիական տարածաշրջանի ուժային կենտրոնների և տնտեսական հիմնական ակտորների հետ երկկողմ ու բազմակողմ հարաբերությունների զարգացման շուրջ քայլերին: Իրանը, մեծացնելով իր էներգետիկ ներկայության ծավալները մի շարք երկրներում, բավական մեծածավալ ֆինանսական հոսքեր ներգրավելով երկրի զարգացման գործում, միևնույն ժամանակ փորձում է ընդգծել իր դերն ու նշանակությունն ինչպես տարածաշրջանում, այնպես էլ արևելք-արևմուտք հիմնական և այլ ուղղություններով էներգետիկ հաղորդակցության ծրագրերում: Միևնույն ժամանակ, Իրանը չի բավարարվել մեկ ուղղությունով՝ զուգահեռ զարգացնելով հարաբերությունները եվրոպական երկրների հետ և փորձելով հարթել մահմեդական աշխարհի երկրների հետ ունեցած տարաձայնությունները:

Իրան-Հարավային Կովկաս. Ակնհայտ է, որ Իրանը ձգտում է զուգահեռ զարգացնել հարաբերությունները հարավկովկասյան տարածաշրջանի երեք երկրների հետ, ինչն առաջին հերթին կարևորվում է տարածաշրջանում հավասարակշռության պահպանման տեսանկյունից: Պաշտոնական Թեհրանը շարունակում է ազդակներ հղել Երևանին և Բաքվին, որ կողմերի ցանկության դեպքում պատրաստ է ստանձնել ղարաբաղյան հարցով միջնորդական առաքելությունը: Մայիսի 4-ին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը հանդիպել է ԻԻՀ դեսպան Սեյեդ Քազեմ Սաջադիի հետ: Կողմերը քննարկել են պաշտպանության և տարածաշրջանային անվտանգության ոլորտներում երկկողմ համագործակցության հարցեր: Սաջադին հայտարարել է նաև, որ կողմերն ակտիվացնում են Իրան-Հայաստան երկաթգծի կառուցման շուրջ ձեռնարկումները:

---

* ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դասախոս, պ.գ.թ.:

Տարածաշրջանի երկրներից ամենապասիվը Վրաստանի հետ հարաբերություններն են: Ասիայի, Օկեանիայի և ԱՊՀ երկրների հարցերով Իրանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Իբրահիմ Ռահիմպուրը Թբիլիսիում հանդիպում է ունեցել Վրաստանի արտգործնախարար Միխայիլ Ջանելիձեի հետ: Պաշտոնյաները քննարկել են երկկողմ առևտրատնտեսական հարբերությունները զարգացնելուն, ինչպես նաև զբոսաշրջության ոլորտում համագործակցությունը խորացնելուն առնչվող հարցեր:

Ադրբեջանի նորանշանակ դեսպան Բունյադ Հուսեյնովի հետ հանդիպման ժամանակ Իրանի նախագահ Ռոհանին ընդգծել է, որ երկկողմ հարաբերություններում զարգացման նոր ազդակներ են պետք, իսկ որպես այդպիսին կարող է լինել նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունների կատարումը:

Իրան-Եվրոպա, սիրիական ճգնաժամի կարգավորում. Իրանի արտաքին քաղաքականության եվրոպական վեկտորն ակտիվ էր մայիսին: Եվրոպական երկրների հետ հարաբերությունները նոր փուլ կարող են թևակոխել Թեհրանում Եվրոպական միության մշտական ներկայացուցչության բացումով, որի աշխատանքներն արդեն մեկնարկել են: Իրանի ատոմային էներգետիկայի կազմակերպության ղեկավար Ալի Աքբար Սալեհին մայիսի 4-ին այցելել է Պրահա, որտեղ չեխ գործընկերների հետ քննարկել է միջուկային էներգետիկայի ոլորտում համագործակցության հեռանկարները: Մայիսի 18-ին Թեհրան է ժամանել Խորվաթիայի նախագահ Կոլինդա Գրաբար-Կիտարովիչը: Նախագահ Ռոհանիի հետ հանդիպման ընթացքում քննարկման հիմնական թեման եղել է երկկողմ տնտեսական համագործակցության զարգացման հարցը, հատկապես մասնավոր սեկտորում: Երկու երկրների միջև ստորագրվել է տնտեսական ոլորտում համագործակցության երկու պայմանագիր: Ռոհանին ընդունել է եվրոպական ևս երկու երկրների՝ Լիտվայի և Ուկրաինայի արտաքին գործերի նախարարներին: Ուկրաինայի արտաքին գերատեսչության ղեկավար Պավել Կլիմկինի հետ հանդիպման ընթացքում կողմերը պայմանավորվել են ակտիվացնել քայլերը երկկողմ համագործակցության զարգացման ուղղությամբ: Ռոհանին ընդգծել է, որ որևէ երրորդ պետություն չի կարող խանգարել Իրանի և Ուկրաինայի միջև հարաբերությունների զարգացմանը՝ միևնույն ժամանակ իր աջակցությունը հայտնելով Ուկրաինայի ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականությանը:

Մայիսի 29-ին Իրանի արտաքին գերատեսչության ղեկավար Մոհամադ Ջավադ Զարիֆի ղեկավարած 60 հոգանոց պատվիրակությունը պաշտոնական շրջագայության մեկնեց եվրոպական չորս երկրներ՝ Լեհաստան, Ֆինլանդիա, Շվեդիա և Լատվիա: Զարիֆը լեհ գործընկերոջ հետ Վարշավայում ստորագրել է երկու երկրների միջև քաղաքական խորհրդակցությունների անցկացման հուշագիր: Կողմերը պայմանավորվել են մեծացնել առևտրաշրջանառության ծավալները՝ այն հասցնելով տարեկան մինչև $1 մլրդ-ի: Հելսինկիում կողմերը քաղաքական, տնտեսական, բանկային ոլորտներում և պառլամենտական հարցերում համագործակցության պայմանավորվածություն են ձեռք բերել: Ստոկհոլմում Զարիֆի և շվեդ գործընկեր Մարգոտ Վալստրյոմի հանդիպման հիմնական թեմաներն առնչվել են տարածաշրջանային անվտանգության և ահաբեկչության դեմ պայքարի հիմնախնդիրներին: Ռիգայում Զարիֆը հանդիպումներ է ունեցել Լատվիայի նախագահի, պառլամենտի խոսնակի, արտաքին գործերի և գյուղատնտեսության նախարարների հետ:

Սիրիական հարցի կարգավորումը շարունակում է մնալ ինչպես Իրանի, այնպես էլ եվրոպական երկրների արտաքին քաղաքականության օրակարգում: Իրանում Ֆրանսիայի նորանշանակ դեսպան Ֆրանսուա Սենեմոյի հետ հանդիպման ժամանակ Իրանի նախագահ Ռոհանին ընդգծել է, որ տարածաշրջանում կայունության հաստատումը, մասնավորապես՝ սիրիական ճգնաժամի կարգավորումը, շահեկան է ինչպես Իրանի, այնպես էլ Ֆրանսիայի համար: Պաշտոնական Վաշինգտոնն իր հերթին հայտարարել է, որ Ռուսաստանն ու Իրանը կրում են հիմնական պատասխանատվությունը հրադադարի հաստատման հարցում ձեռք բերված պայմանավորվածություններն Ասադի վարչակարգի կողմից կատարելու համար: Թերևս, Սիրիայի հարցով հիմնական իրադարձությունը մայիսի 16-ին և 17-ին Վիեննայում կազմակերպված միջազգային հանդիպումն էր: Հանդիպումները հիմնականում տեղի են ունեցել փակ դռների հետևում: Զավադ Զարիֆը հանդիպումներ է ունեցել Ռուսաստանի, ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի իր պաշտոնակիցների հետ: Իրանի փոխարտգործնախարար Աբաս Արաքչին հանդիպել է ԵՄ արտաքին հարցերով հանձնակատարի տեղակալ Հելգա Շմիդի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են ինչպես սիրիական խնդրին, այնպես էլ Իրանի հետ միջուկային համաձայնագրին և ԵՄ-Իրան հարաբերություններին առնչվող հարցեր:

Իրան-ԱՄՆ, միջազգային պատժամիջոցներ. Մայիսի 5-ին Իրանի արտաքին գործերի գերատեսչությունը ԱՄՆ դեսպանության գործառույթները կատարող Շվեյցարիայի դեսպանատուն է հանձնել բողոքի նոտա, որտեղ պաշտոնական Թեհրանը կոշտ պատասխան է տվել ավելի վաղ ԱՄՆ Կոնգրեսում սենատոր Ռենդի Ֆորբսի առաջ քաշած բանաձևին: Դրանով Իրանը մեղադրվում է Պարսից ծոցի ավազանում իրավիճակը սրելու և արտասահմանում գործող ԱՄՆ զինված ուժերի համար վտանգ ստեղծելու մեջ: Բողոքի նոտայով Իրանը փոխադարձ մեղադրում է ԱՄՆ-ին Մերձավոր Արևելքի տարածաշրջանի գործերին խառնվելու մեջ՝ միևնույն ժամանակ հավաստիացնելով, որ շարունակելու է ձեռնարկել քայլեր տարածաշրջանում կայունության և խաղաղության հաստատման ուղղությամբ:

Իրանը շարունակում է պայքարել ԱՄՆ բանկերում իրանական սառեցված ակտիվները վերադարձնելու ուղղությամբ: Երկրի խորհրդարանի խոսնակ Ալի Լարիջանին կոչ է արել արտաքին գործերի նախարարությանը ԱՄՆ-ում Իրանի սառեցված ակտիվների վերադարձի հարցով դիմել ՄԱԿ միջազգային դատարան: Իսկ երկրի արտաքին գերատեսչության ղեկավար Զարիֆը հայտարարել է, որ ԱՄՆ դատարանի որոշումն իրավական հիմքեր չունի ոչ Իրանի և ոչ էլ նրա գումարների վրա: Իրանի խորհրդարանը հավանության է արժանացրել օրենքի մի նախագիծ, որով ԱՄՆ-ից պահանջվում է փոխհատուցում 1953թ. Իրանում հեղափոխություն կազմակերպելու, դրանից հետո 26 տարի շարունակ Իրանի ռեսուրսների հաշվին իր նավթային պահանջները բավարարելու, 1980-ական թթ. Իրանի տարածք իրաքյան ներխուժմանն աջակցելու, Իսրայելի հակահրանական գործողություններին սատարելու, ինչպես նաև Իրանի ակտիվների սառեցման հետևանքով կրած ֆինանսական կորուստների դիմաց:

Իրանը դժգոհ է միջուկային համաձայնագրի կետերի կատարման գործընթացից և գտնում է, որ արևմուտքի կողմից արհեստական խոչընդոտներ են ստեղծվում: Թեպետ ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերին հայտարարել է, թե ԱՄՆ-ը պատժամիջոցներ չի կիրառի Իրանի հետ համագործակցող եվրոպական բանկերի նկատմամբ ու կոչ է արել վերջիններիս Իրանի հետ չհամագործակցելու մեջ չմեղադրել ԱՄՆ-ին, վեցնյակի հետ պայմանավորվածությունների չկատարման հարցում Իրանը շարունակում է մեղադրել հենց ԱՄՆ-ին:

ԵՄ արտաքին գործերի գերատեսչության ղեկավար Ֆեդերիկա Մոգերինին Իրանի հետ միջուկային համաձայնագրի կատարման ընթացքի հետ կապված հարցերի քննարկման ժամանակ ԱՄՆ, Ֆրանսիայի, Գերմանիայի և Մեծ Բրիտանիայի արտգործնախարարներին փաստել է, որ Իրանը կատարում է իր մասով պարտավորությունները: Մայիսի 20-ին արդեն պաշտոնական Վաշինգտոնը հայտարարեց, որ այլևս արգելանք չի դնի Իրանի նավթի վաճառքի ծավալների վրա: Միևնույն ժամանակ, ԱՄՆ-ը չի պատրաստվում թույլ տալ Իրանին մուտք գործել ԱՄՆ ֆինանսական համակարգ: Երկրի ֆինանսների փոխնախարար Ադամ Շուբինը հայտարարել է, որ շարունակելու է գործել արգելանքը, ըստ որի՝ ԱՄՆ քաղաքացիները չեն կարող ներդրումներ անել Իրանում, ինչպես նաև վերջինին հասու չեն կարող լինել ԱՄՆ շուկան և բանկային համակարգը:

«ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տարբեր երկրների փորձը

Դիանա Գալստյան*, Մարիամ Խալաթյան**

Հասարակական կազմակերպությունների (ՀԿ) դերն առանցքային է յուրաքանչյուր պետության հասարակական կյանքի կազմակերպման և կոնկրետ խնդիրների կարգավորման գործընթացում: Պետությունները կարևորում են ՀԿ-ների գործունեության իրավական դաշտի ձևավորումը, վերահսկողության մեխանիզմների սահմանումը:

Դեռևս 19-րդ դարում ՀԿ-ների գործունեության վերահսկման օրենքի նախատիպը գրանցվել է Մեծ Բրիտանիայում, որը միտված է եղել ապահովելու կազմակերպությունների գործունեության թափանցիկությունը: Մինչդեռ վերջին տարիներին տարբեր երկրներում նմանօրինակ օրինագծերին, օրենքներին ուղեկցող քննարկումներն ընթանում են առավելապես ՀԿ-ների արտասահմանից ֆինանսավորմանն առնչվող շեշտադրումներով: Օրենքի կողմնակիցները գտնում են, որ դրսից ֆինանսավորումը պետության կառավարման գործընթացում վերահսկողություն սահմանելու նպատակ է հետապնդում: Հետևաբար, այն ՀԿ-ները, հիմնադրամները կամ ԶԼՄ-ն, որոնք ֆինանսավորվում են արտասահմանից, զբաղվում են ներքաղաքական գործունեությամբ՝ արտահայտելով այլ երկրի շահերը, համարվում են *«օտարերկրյա գործակալներ»: «Օտարերկրյա գործակալ»* համարվում է իրավաբանական կամ ֆիզիկական անձը, ով գործում է *«օտարերկրյա ղեկավարների հրամանով, նրանց վերահսկողության տակ է գտնվում»*, և դրա հետ մեկտեղ, *«զբաղվում է քաղաքական գործունեությամբ արտասահմանյան ղեկավարի հետաքրքրությունների շրջանակներում»*[1]: Տարբեր երկրներում կարևոր են համարում իրավական տեսանկյունից նման կազմակերպությունների գործունեության կարգավորման խնդիրները:

---

* «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ:
** «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:

[1] http://www.imrussia.org/ru/politics/1455

«Օտարերկրյա գործակալներ»-ի մասին օրենքի ընդունման գործընթացին ուղեկցող քննարկումների արդյունքում ձևավորվել են «կողմ» և «դեմ» խմբեր: Առաջինները ՀԿ-ների օտարերկրյա ֆինանսավորման սահմանափակման անհրաժեշտությունը հիմնավորում են պետության կառավարման գործընթացում օտարերկրյա միջամտության վտանգով: Երկրորդ խմբի ներկայացուցիչները մատնանշում են *«գործակալ»* բառի բացասական երանգավորումը: Նրանց մտահոգությունները կապված են ՀԿ-ների՝ արտասահմանից ֆինանսավորումը կտրականապես արգելելու խնդրի հետ, որով առաջնորդվում են մի շարք երկրներ, ինչն այլ ֆինանսական աղբյուրի բացակայության պարագայում կարող է հանգեցնել ՀԿ-ների գործունեության դադարեցմանը:

Ստորև կանդրադառնանք ՀԿ-ների գործունեության վերահսկմանը, օտարերկրյա ֆինանսավորման սահմանափակումներին տարբեր երկրների օրինակով:

Մեծ Բրիտանիա. Բրիտանիայում գործում է ՀԿ-ների գործունեության վերահսկման և թափանցիկության ամենահին համակարգը: 1853թ. ընդունված *Բարեգործական վստահության ակտի* (*Charitable Trusts Act*) համաձայն՝ բարեգործական կազմակերպությունների գործունեությունը վերահսկվում է համապատասխան հանձանաժողովի կողմից, որը բարեգործական սեկտորի վիճակի համար հաշվետու է կառավարության առջև: Հանձնաժողովում պետք է գրանցվեն բոլոր բարեգործական կազմակերպությունները, որոնք ստանում են տարեկան 5000 ֆունտ ստերլինգից ավելի գումար: Նրանց տրվում է գրանցման համար, որի միջոցով կարելի է ստուգել կազմակերպության կարգավիճակը, տեղեկատվություն ստանալ եկամուտների մասին և անհրաժեշտության դեպքում բողոք ներկայացնել:

Բարեգործական կազմակերպությունների մասին ողջ տեղեկատվությունը, այդ թվում նաև մանրամասն ֆինանսական հաշվետվությունը (որոնք գրանցված ՀԿ-ներն ամեն տարի ներկայացնում են հանձնաժողովին), տեղադրված են կայքում: Եթե կազմակերպությունն ուշացնում կամ չի տրամադրում տվյալներ, ապա այն զրկվում է գրանցումից և ինքնաբերաբար կորցնում է հարկային արտոնությունները և բարեգործի վստահությունը: Հանձնաժողովը հետևում է, որպեսզի կազմակերպությունները չօգտագործեն իրենց կարգավիճակը հարկեր չվճարելու նպատակով, և չօգտագործեն այն ինչ-որ մեկի անձնական և քաղաքական նպատակներով: Հանձնաժողովն աշխատում է

քաղաքացիների բողոքների հետ, որոնց հիման վրա կարող են տվյալ կազմակերպություններում ստուգումներ անցկացնել[2]:

ԱՄՆ. *«Օտարերկրյա գործակալների»* մասին օրենքը ԱՄՆ-ում (*The Foreign Agents Registration Act (FARA*) գործում է 1938-ից: Օրենքի համաձայն՝ *«օտարերկրյա գործակալները»*, որոնք ամերիկյան քաղաքականության մեջ ներկայացնում են արտասահմանյան կառավարությունների շահերը, ինչպես նաև արտասահմանյան ֆիզիկական և իրավաբանական անձինք, պետք է ԱՄՆ կառավարությանը ներկայացնեն իրենց գործունեությունը և ֆինանսավորման աղբյուրները:

Օրենքը սկզբում ընդունվել է ԱՄՆ Կոնգրեսի կողմից նացիստական և կոմունիստական պրոպագանդայի դեմ պայքարի նպատակով: Սակայն հետպատերազմական շրջանում դրանում բազմաթիվ ճշգրտումներ են կատարվել, որոնցից հատկապես կարևոր էին 1966թ. արվածները: Արդյունքում՝ շեշտադրումը պրոպագանդայից անցավ քաղաքական լոբբինգի վրա, ինչը զգալիորեն նեղացրեց «օտարերկրյա գործակալ» հասկացությունը: Օրենքի հաջորդ ճշգրտումները, որոնց արդյունքում «քաղաքական պրոպագանդա» բացասական երանգ ունեցող տերմինը փոխարինվեց «տեղեկատվական նյութեր» չեզոք ձևակերպմամբ, ուժի մեջ մտան 1996թ. հունվարի 1-ից:

Օրենքը բացառություններ է անում այն ՀԿ-ների համար, որոնց գործունեությունը կրում է կրոնական, ակադեմիական, գիտական կամ գեղարվեստական բնույթ, և նաև նրանց համար, որոնց գործունեությունը գլխավորապես չի ծառայում օտար երկրի շահերին: ԱՄՆ կառավարությունն իրավունք չունի որևէ կազմակերպություն անվանել «օտարերկրյա գործակալ»՝ առանց հետևյալ երկու չափանիշների հաստատման.

- արտասահմանյան պատվիրատուի վերահսկողության տակ գտնվելու փաստացի ապացույց,
- արտասահմանյան պատվիրատուի շահերն իրականացնելու փաստացի ապացույց[3]:

Ըստ *FARA*-ի պաշտոնական կայքի տվյալների՝ ԱՄՆ-ում գրանցված է 493 *«օտարերկրյա գործակալ»*[4]:

[2] http://ivan4.ru/news/society/inostrannye_agenty_opyt_raznykh_stran/
[3] Նույն տեղում:
[4] http://www.fara.gov/qs-foreignprincipal.html

Ռուսաստան. 2012թ. հուլիսի 6-ին ՌԴ Պետական դումայում ընդունված օրենքը վկայում է այն մասին, որ արտերկրից ֆինանսավորում ստացող՝ քաղաքական գործունեություն ծավալող կազմակերպությունները պետք է գրանցվեն որպես *«օտարերկրյա գործակալներ»*: Օրենքը չի տարածվում կրոնական կազմակերպությունների, պետական կազմակերպությունների և նրանց կողմից ստեղծված հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև պետական, տեղական ինքնակառավարման և բյուջետային հաստատությունների վրա:

«Օտարերկրյա գործակալի» ֆունկցիա կատարող հասարակական կազմակերպությունները կես տարին մեկ գործադիր իշխանության ոչ կոմերցիոն կազմակերպությունների գրանցման դաշտում լիազորված դաշնային կառույցներին պետք է ներկայացնեն իրենց գործունեության և ղեկավար անձնակազմի մասին տեղեկատվություն, եռամսյակը մեկ՝ հաշվետվություններ ֆինանսական ծախսերի մասին, իսկ աուդիտորական եզրակացությունները՝ տարին մեկ անգամ: Բացի այդ, նշված կազմակերպությունները տարին մեկ համացանցում պետք է հաշվետվություն տեղադրեն իրենց ծավալած գործունեության մասին: ՀԿ-ների պլանային ստուգումները նախատեսված են անցկացնել տարին մեկ, սակայն ընդունված դաշնային օրենքով փաստարկվում է նաև այն միտքը, որի համաձայն՝ կարող են ոչ պլանային ստուգումներ ևս անցկացնել: Նշված ՀԿ-ների հրատարակած կամ լրատվամիջոցներով, համացանցով տարածվող նյութերում պետք է նշված լինի, որ նյութերը հրապարակվել և տարածվում են *«օտարերկրյա գործակալի»* ֆունկցիաներ կատարող կազմակերպության կողմից: ՀԿ-ների՝ արտասահմանյան աղբյուրներից ստացված 200 հազար ռուբլին գերազանցող միջոցները ենթակա են վերահսկողության[5]:

Ռուսաստանում այս օրինագիծը դեռևս ճշգրտումների և փոփոխությունների փուլում է: Այսպես, 2016թ. մայիսին այս օրինագծում ճշգրտումներ արվեցին, ինչն արժանացավ ՀԿ-ների գործերով պետական հանձնաժողովի հավանությանը: Ճշգրտումների համաձայն՝ *«օտարերկրյա գործակալ»* ձևակերպումը չի տարածվում բարեգործական հիմնադրամների և մշակութային կազմակերպությունների վրա, սակայն, միևնույն ժամանակ, նշվում է, որ գնահատողական մոտեցում կցուցաբերվի բոլոր այդ կազմակերպությունների

[5] http://ria.ru/spravka/20140616/1011656413.html#ixzz41Ajxns00

գործունեության նկատմամբ[6]: ՌԴ արդարադատության նախարարության պաշտոնական կայքի տվյալների համաձայն՝ այս պահի դրությամբ այնտեղ գործում է 123 «օտարերկրյա գործակալ»[7]:

Ֆրանսիա. Ֆրանսիայի օրենսդրությամբ առանձնացվում են 2 տիպի ՀԿ-ներ՝ ասոցիացիաներ և հիմնադրամներ: Իրավաբանական անձի կարգավիճակ ստանալու համար ասոցիացիան ստեղծման մասին պետք է տեղեկացնի պրեֆեկտուրա: Ներքին գործերի նախարարությունը չի կարող թույլ չտալ ստեղծել ասոցիացիա, սակայն կարող է դիմել դատարան՝ կասեցնելու դրա գործունեությունը, եթե այն խախտում է կանոնադրությամբ ամրագրված նպատակները կամ անօրինական գործունեություն է ծավալում:

ՀԿ-ների ֆինանսավորման աղբյուր են հանդիսանում.

- ՀԿ սեփական միջոցները (անդամավճարներ, ձեռներեցություն),
- պետական ֆինանսավորումը,
- ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները, գրանտները:

Ֆրանսիայում ֆինանսավորման հիմնական աղբյուրը, սակայն, պետության կողմից տրամադրվող միջոցներն են: Համաձայն այս երկրում գործող օրենքների՝ արտասահմանյան ֆինանսավորումը պետք է արտացոլվի կազմակերպության հաշվետվություններում: Բացի այդ, արտասահմանից ֆինանսավորում ստանալու համար համապատասխան ստուգումներ անցկացնելուց հետո պետք է ստանալ պրեֆեկտի թույլտվությունը: ՀԿ-ների ղեկավարները և նրանց վերահսկող խորհուրդների անդամները քրեական պատասխանատվություն են կրում ֆինանսական միջոցների ճիշտ չօգտագործման և օրենքի խախտման դեպքում[8]:

Իսրայել. 2015թ. դեկտեմբերի 27-ին Իսրայելի կառավարությունը հավանության էր արժանացրել արտասահմանից ֆինանսավորվող հասարակական կազմակերպությունների մասին օրենքի նախագիծը: 2016թ. փետրվարին Իսրայելի պառլամենտն առաջին ընթերցմամբ 50:43 հարաբերակցությամբ հաստատեց պետական օրինագիծ, որի համապատասխան՝ հասարակական

[6] https://www.vedomosti.ru/politics/articles/2016/05/18/641418-blagotvoritelei-inostrannih-agentov
[7] http://unro.minjust.ru/NKOForeignAgent.aspx
[8] http://dis.ru/library/671/30224/

ոչ պետական կազմակերպությունները պարտավորվում են հայտնել, թե արդյոք ստանում են ֆինանսական աջակցություն այլ (օտար) պետություններից: Այս նախագծի գործառությանը ենթարկվում են այն բոլոր կազմակերպությունները, որոնք ավելի քան 50%-ով ֆինանսավորվում են այլ (օտար) պետություններից կամ պետական մարմիններից:

Օրենքն ուժի մեջ մտնելու համար պետք է երկու ընթերցում անցնի, սակայն տեղական դիտորդները նշում են, որ կառավարության հաղթանակն այդ օրինագծի քննարկման հարցում առաջին ընթերցման ժամանակ առանցքային կարևորություն ունի[9]:

Չինաստան. Այս երկրում արդեն երրորդ ընթերցմամբ պետական մակարդակով օրինագիծ է ընդունվել, որի արդյունքում խստացվել է Չինաստանի տարածքում գործող ՀԿ-ների ֆինանսական գործունեությունը: *AFP* տվյալներով՝ 2016թ. դրությամբ Չինաստանում մոտավորապես 1000 օտարերկրյա ՀԿ է գործում: Չինաստանի օրենսդիր մարմինների ներկայացուցիչները պարտավորեցնում են իրենց երկրում գործող օտարերկրյա ՀԿ-ներին գրանցվել ՉԺՀ Հասարակական անվտանգության նախարարության բաժիններում: Օրինագիծը սահմանում է, որ օտարերկրյա ՀԿ-ները պետական մարմինների կողմից հսկողության տակ են գտնվելու և պարտավորվելու են կառավարությանը տեղյակ պահել իրենց գործունեության մասին: Նրանք պետք է պարբերաբար աուդիտ իրականացնեն և հրապարակեն իրենց եկամուտները, եկամուտների ու ծախսերի պարբերական հաշվետվություններ ներկայացնեն: Չինական կազմակերպություններին նաև հրահանգվում է դադարեցնել համագործակցությունն այն ՀԿ-ների հետ, որոնք վտանգ են ներկայացնում ազգային անվտանգության համար: Այս փաստաթղթի ընդունումը չի վերաբերում չինական կազմակերպությունների անուղղակի համագործակցությանն օտարերկրյա կրթական, բժշկական և գիտական հաստատությունների հետ: Մասնավորապես, այժմ Չինաստանում օտարերկրյա կազմակերպությունները հնարավորություն են ստանում ավելի քան մեկ մասնաճյուղ ունենալ երկրի մայրցամաքային տարածքում, միևնույն ժամանակ անհրաժեշտություն կա այդ մասնաճյուղերը նորից գրանցել ամեն 5 տարին մեկ[10]:

[9] http://www.kommersant.ru/doc/2901156

[10] https://www.newsru.com/world/28apr2016/chinango.html

Օրենքը քննադատվում է մի քանի սկզբունքների պատճառով, մասնավորապես՝ ՀԿ-ները պարտավորվում են գրանցվել մի քանի մարմիններում միաժամանակ, ինչը բարդացնում է բյուրոկրատական գործընթացները, ՀԿ-ների վերահսկողությունը Քաղաքացիական հարցերով նախարարությունից անցնում է Հասարակական անվտանգության նախարարության հսկողության տակ, օտարերկրյա ՀԿ-ները պարտավորվում են ունենալ տեղի հաշվապահ, իսկ անձնակազմի ոչ պակաս, քան 50%-ը պետք է լինի Չինաստանի քաղաքացի[11]:

[11] http://www.rosbalt.ru/main/2015/06/25/1412275.html

Էներգետիկա

ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉԸ

(Իրան-Ադրբեջան-Ռուսաստան)

Արմեն Մանվելյան[*]

Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքի ձևավորումը նոր վճռական փուլ է մտել՝ պայմանավորված Իրանի նկատմամբ պատժամիջոցների վերացմամբ և այդ ուղղության հանդեպ հետաքրքրության աճով: Այս պայմաններում Հարավային Կովկասը կարող է կարևոր դեր ունենալ այդ միջանցքի ձևավորման գործում, և պայքարը հենց այս տարածաշրջանի համար նոր է սկսվում: Ադրբեջանը փորձում է օգտագործել իր աշխարհագրական և էներգետիկ առավելությունն այս միջանցքում կարևոր տեղ զբաղեցնելու համար:

Սակայն այս ծրագրին մաս կազմելու համար նախևառաջ հարկավոր է հասկանալ այս միջանցքի կառուցմամբ շահագրգիռ հիմնական գործող ուժերի տնտեսական և աշխարհաքաղաքական շահերը, ինչպես նաև մյուս պետությունների՝ այդ գործընթացում տեղ զբաղեցնելու հնարավորությունները:

Նոր ուղղություն հարավկովկասյան էներգետիկ փոխադրումների գործընթացում

Հարավային Կովկասում փորձ է արվում ստեղծել էներգետիկ համագործակցության նոր ուղղություն՝ հյուսիսից դեպի հարավ, Ադրբեջանի մասնակցությամբ, ինչը դեռ մի քանի տարի առաջ անհնար էր թվում՝ պայմանավորված տարածաշրջանում Արևմուտքի աջակցությամբ ձևավորվող Արևելք-Արևմուտք էներգետիկ ուղղությամբ: Երկար տարիներ համարվում էր, որ Կասպից ծովի ադրբեջանական ափից Վրաստանով դեպի Թուրքիա էներգակիրների արտամղումը տարածաշրջանի էներգակիրների արտահանման կարևոր ուղղություններից է, քանի որ այն վայելում էր Արևմուտքի և հատկապես ԱՄՆ քաղաքական ու տնտեսական աջակցությունը: Այս քաղաքակա-

[*] Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, միջազգային անվտանգության և էներգետիկ աշխարհաքաղաքականության մասնագետ, պ.գ.թ.:

նության նպատակն էր Հարավային Կովկասը և հետագայում նաև Կենտրոնական Ասիան դուրս բերել Ռուսաստանի ազդեցության գոտուց և ձևավորել էներգետիկ աշխարհաքաղաքական նոր իրողություն, որտեղ գերիշխողը պետք է լինեն ԱՄՆ-ը և նրա կողմից վերահսկվող անդրազգային նավթագազային ընկերությունները:

Բաքու-Ջեյհան և ապա Բաքու-Էրզրում խողովակաշարերի շահագործումից հետո թվում էր, թե այս ծրագիրը գոնե մասամբ իրականություն է դարձել, և Կովկաս-կասպյան տարածաշրջանի նավթով ու գազով հարուստ պետությունները՝ իրենց հանքավայրերով և դրանց տարանցման միջոցներով, արդեն լիովին գտնվում են անդրազգային նավթագազային հսկաների վերահսկողության ներքո: Այդ ընկերությունները մեծ մասամբ վերահսկում են նաև այդ պետությունների նավթի և գազի արդյունահանման հիմնական կոնսորցիումները: Այսինքն՝ մինչև 2010թ. Կովկաս-կասպյան տարածաշրջանն իր էներգետիկ բաղադրիչով ուներ ընդգծված արևմտյան ուղղություն, դեպի ուր հոսում էին այդ պետությունների էներգակիրները:

Ավելի ուշ սկսեց ակտիվանալ նաև Չինաստանը, որը 2010-ից կարողացավ Ղազախստանի և ապա Թուրքմենստանի հետ իրականացնել մի քանի ծրագրեր, ինչի արդյունքում նավթը և գազն այդ երկրներից սկսեց հոսել դեպի Արևելք: Չինաստանի ակտիվացումը Կենտրոնական Ասիայում նվազեցրեց նաև Ադրբեջանի դերակատարությունն Արևմուտքի համար՝ որպես դեպի այդ տարածաշրջանի էներգետիկ շուկա դուրս գալու հիմնական ուղղություն:

Այսինքն՝ թե՛ Բաքու-Ջեյհան և թե՛ Բաքու-Էրզրում խողովակաշարերը դարձան լոկալ, այլ ոչ թե տարածաշրջանային ծրագրեր, որոնք իրականացնում էին միայն ադրբեջանական նավթը դեպի Արևմուտք դուրս բերելու գործընթաց, ինչը միայն մասամբ էր կատարում այն դերը, որի համար այն հաշվառված էր՝ ապահովել ելք դեպի Կենտրոնական Ասիայի նավթով ու գազով հարուստ տարածաշրջան:

Արդյունքում՝ արդեն 2010 թվականից հետո Կասպից ծովի ավազանի շուրջ ձևավորվել է էներգետիկ աշխարհաքաղաքականության մի իրավիճակ, երբ նավթի պաշարներն այդ տարածաշրջանից հոսում էին կամ դեպի Արևմուտք, կամ դեպի Արևելք:

Հյուսիս-Հարավ ուղղության էներգետիկ բաղկացուցիչը ժամանակի ընթացքում թուլանում էր, և Ադրբեջանից ու Կենտրոնական Ասիայից, հատկա-

պես Ղազախստանից ու Թուրքմենստանից, գազի և նավթի արտամղումը դեպի Ռուսաստան կրճատվում, իսկ շատ դեպքերում ընդհանրապես դադարում էր: Այսպես, Թուրքմենստանից դեպի Ռուսաստան գազի արտահանումը հասել է վերջին 10 տարիների նվազագույնին, իսկ Ղազախստանից ու Ադրբեջանից դեպի Նովոռոսիյսկ նավահանգիստ նավթի հոսքն էականորեն կրճատվել է:

Հետևաբար, այս պայմաններում հատկապես Ռուսաստանի համար Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքին զուգահեռ նոր էներգետիկ ուղղության մշակումը սկսում է ռազմավարական նշանակություն ձեռք բերել՝ վերադարձնելու համար կորցրած ազդեցությունը կենսական նշանակություն ունեցող տարածաշրջաններում՝ Կենտրոնական Ասիայում և Հարավային Կովկասում:

Հյուսիս-Հարավ ուղղությունը և դրա նոր բաղկացուցիչը

Նոր միջազգային նշանակության տրանսպորտային միջանցքի շուրջ բանակցություններն ակտիվ էին անցած դարի 90-ական թթ.: Զարգացող ասիական տնտեսությունը և համագործակցությունը Եվրամիության հետ ռազմավարական նշանակություն էր ձեռք բերում, և այս պայմաններում հատկապես անհրաժեշտ էր Հարավարևելյան Ասիայի պետություններին Եվրոպայի հետ կապող նոր, կարճ ուղու ձևավորման հարցի լուծում:

Գործող ծովային ուղին՝ Հնդկական օվկիանոսից դեպի Կարմիր ծով, ապա՝ Սուեզի ջրանցքով դեպի Միջերկրական ծով, բավական երկար էր ու թանկ, այն հատկապես թանկանում էր, երբ պետք էր լինում բեռները հասցնել Հյուսիսային Եվրոպա, Սկանդինավյան թերակղզի:

Այս պայմաններում նոր, ավելի արդյունավետ ու կարճ ուղու մշակումը դարձավ հրատապ խնդիր Եվրամիության անդամ պետությունների համար:

1993թ. Հելսինկիում Եվրամիության անդամ պետությունների հերթական հավաքի ժամանակ այլ հարցերի հետ միասին քննարկվեց նաև նոր ուղու մշակման հարցը, որի պայմանական անունը դրվեց «Միջանցք-9»[1]: Այդ միջանցքը, որը նաև կոչվեց Հյուսիս-Հարավ, պետք է Հյուսիսային Եվրոպան, Սկանդինավիան և Ռուսաստանն Իրանի տարածքով կապեր Պարսից ծոցի, Հնդկական օվիկանոսի և Հարավարևելյան Ասիայի պետությունների հետ:

2000թ. սեպտեմբերի 12-ին Սանկտ Պետերբուրգում Ռուսաստանի, Իրանի և Հնդկաստանի տրանսպորտի նախարարները ստորագրեցին պայմանա-

[1] *А.Трофимов,* Коридор «Север-Юг»: ОБЗОРНЫЙ ВЗГЛЯД, http://www.iimes.ru/rus/stat/2002/29-11-02.htm

գիր Հյուսիս-Հարավ միջազգային տրանսպորտային միջանցքի մասին[2]: Այս պայմանագրով պետությունները կարևոր ռազմավարական խնդիրներ էին դնում իրենց առջև՝ գործող ծովային միջանցքին իրական այլընտրանք դառնալու նպատակով, որին հասնելու համար կողմերը պայմանավորվում էին նվազեցնել ապրանքների տարանցման ժամանակը, կրճատվում էր նաև տարանցման ճանապարհածախսը, հեշտացվում և միանման էր դարձվում ապրանքների մաքսազերծման ու փաստաթղթավորման գործընթացը:

Այսինքն՝ այս պայմանագրով նպատակ էր հետապնդվում Հարավարևելյան Ասիա - Հյուսիսային Եվրոպա տրանսպորտային ծրագրում առաջնություն ստանալ և թելադրել այդ ուղու կառուցման հենց այս ուղղությունը, որտեղ գերիշխողը, ըստ Մոսկվայի, պետք է լիներ Ռուսաստանը: Պարզ էր նաև, որ ծրագրի հիմնական իրականացնողները պետք է լինեին նաև Հնդկաստանն ու Իրանը: Կողմերն այսպիսով ցանկանում էին դուրս գալ ոչ միայն Հարավարևելյան Ասիայի ընդլայնվող շուկաներ, այլև օգտվել Հյուսիսային Եվրոպայի տեխնոլոգիապես հարուստ հնարավորություններից: Ըստ որոշ մասնագետների՝ ծրագրի իրականացման արդյունքում տրանսպորտային ծախսերը կնվազեն մինչև 30%, իսկ ապրանքների փոխադրման ժամանակը կկրճատվի երեք անգամ[3]:

Սանկտ Պետերբուրգում կնքված պայմանագրով կողմերը պայմանավորվում էին նաև փոխադրումների անվտանգության, տրանսպորտային քաղաքականության համակարգման, ապրանքափոխանակության մեծացման, տարածաշրջանների շուկաների փոխադարձ բացման, շրջակա միջավայրի պաշտպանության և այլ հարցերի շուրջ: Կողմերը համագործակցում էին նաև ծովային, երկաթուղային և այլ տիպի տրանսպորտային փոխադրումների շուրջ միասնական չափորոշիչների մշակման հարցով:

Սակայն այս ծրագիրը դադարեց աշխատել Իրանի նկատմամբ պատժամիջոցների սահմանումից հետո, ինչի հետևանքով վերջինս փաստորեն դուրս մնաց նախագծից, սկսեց խոսվել Կենտրոնական Ասիայով և Կասպից ծովով այլընտրանքային ուղու մշակման մասին:

[2] Նույն տեղում:

[3] The Political Consequences Of Iran And Azerbaijan's Energy Agreements, http://oilprice.com/Latest-Energy-News/World-News/The-Political-Consequences-Of-Iran-And-Azerbaijans-Energy-Agreements.html

Իրանական գործոնը և էներգետիկ նոր ուղու մշակման փորձերը

Իրանի նկատմամբ պատժամիջոցների չեղարկումը նորից վերականգնեց Հյուսիս-Հարավ միջանցքի շուրջ խոսակցությունը, թեև մինչ այդ էլ պարզ էր, որ առանց իրանական գործոնի տվյալ միջանցքը թերի է: Ծրագրի իրականացումն Իրանի տարածքով կարող է միայն իրական այլընտրանք լինել գործող մյուս (այդ թվում ծովային) ուղիների համար և էականորեն նվազեցնել ու արագացնել ապրանքների փոխադրումը հարավից հյուսիս և հակառակը:

Փոփոխվող պայմաններում ակտիվացավ հատկապես Ռուսաստանը, որը ցանկանում է վերակենդանացնել դեռ 2000թ. կնքված պայմանագիրը, որն Իրանի դեմ պատժամիջոցների պատճառով չէր գործում:

2015թ. հոկտեմբերի 30-ից մինչև նոյեմբերի 2-ը Մոսկվայում ԱՊՀ էներգետիկ գագաթաժողովի ժամանակ կայացավ նաև Ռուսաստանի, Ադրբեջանի և Իրանի էներգետիկայի նախարարների հանդիպումը, որի ժամանակ քննարկվեց կողմերի միջև էլեկտրաէներգիայի փոխանակման հարցը: Եռակողմ հանդիպմանը Ռուսաստանի էներգետիկայի նախարար Ալեքսանդր Նովակի, Իրանի նախարար Համիդ Չիտչանի և Ադրբեջանի նախարար Նաթիք Ալիևի մասնակցությամբ քննարկվեց եռակողմ էլեկտրափոխանակումների սինքրոնացման հարցը[4]:

Ռուսաստանի և Ադրբեջանի էլեկտրաէներգետիկ համակարգերը միմյանց հետ կապված են երկու՝ Դերբենդի 330 կիլովոլտ լարման և Յալամայի 110 կիլովոլտ լարման գծերով: Իր հերթին, Ադրբեջանի և Իրանի էլեկտրահաղորդման կայանները միմյանց հետ կապված են Պարսաբադ մեկ (230 կիլովոլտ) և Պարսաբադ երկու (330 կիլովոլտ), Աստարա (110 կիլովոլտ) և Ջուլֆա ու Արազ (132 կիլովոլտ) գծերով[5]:

Այս ծրագրի իրականացմամբ Ադրբեջանը ցանկանում է կարևոր տեղ զբաղեցնել էլեկտրաէներգիայի փոխանակման Իրան–Ռուսաստան ծրագրում՝ իրեն կապելով այս պետությունների էլեկտրաէներգիայի տարանցումը:

Ադրբեջանի որդեգրած քաղաքականության շարունակությունը դարձավ 2016թ. փետրվարին այդ պետության նախագահի այցը Թեհրան, որտեղ քննարկվող կարևորագույն խնդիրը Հյուսիս-Հարավ տրանսպորտային մի-

[4] Россия, Азербайджан и Иран планируют синхронизировать энергосистемы, http://pcsu.ru/%D1

[5] *А.Трофимов*, Коридор «Север-Юг»: ОБЗОРНЫЙ ВЗГЛЯД, http://www.iimes.ru/rus/stat/2002/29-11-02.htm

ջանցքում Ադրեջանի դերի ակտիվացումն էր: Ըստ ադրբեջանական աղբյուրների՝ կողմերը եկել են համաձայնության մինչև 2016թ. ավարտը միավորել երկաթուղային գծերը Աստարա (Ադրբեջան)-Աստարա (Իրան) ուղղությամբ[6]:

Թեհրան կատարած այցի ընթացքում կողմերը նաև համաձայնագիր ստորագրեցին Արաքս գետի վրա «Հուդաֆերին» և «Գազ Գալասի» կոչվող հիդրոկայանների կառուցման և համատեղ շահագործման շուրջ:

2016թ. ապրիլին Բաքվում Ռուսաստանի, Ադրբեջանի և Իրանի արտգործնախարարները հանդիպման ընթացքում քննարկեցին նաև Հյուսիս-Հարավ միջանցքի ծրագրի իրականացման շուրջ գործնական քայլեր ձեռնարկելու հարցերը: Այս մասին մամուլի ասուլիսի ժամանակ հայտնեց ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը[7]:

Կողմերի շահագրգռվածությունը՝ շարունակել եռակողմ համագործակցությունը, պարզ դարձավ նաև Ռուսաստանի նախագահի մամուլի քարտուղարի հայտարարությունից, որը նշեց, որ այս տարվա ընթացքում նախատեսվում է նաև Ռուսաստանի, Ադրբեջանի և Իրանի նախագահների հանդիպումը[8]:

Ամփոփում

Ադրբեջանը Հյուսիս-Հարավ միջանցքի շուրջ սկսված բանակցությունները փորձում է օգտագործել տարածաշրջանում իր դիրքերի ամրապնդման և այս գործընթացից Հայաստանի դուրսմղման համար:

Տարածաշրջանում ձևավորվում է նոր մրցակցություն, որի նպատակն է կարևոր տեղ զբաղեցնել Հյուսիս-Հարավ տրանսպորտային նոր միջանցքում: Ադրբեջանը փորձում է առաջնություն ստանալ այս գործընթացում՝ օգտագործելով աշխարհագրական և էներգետիկ իր հնարավորությունները: Այդ երկիրը ցանկանում է իր էներգետիկ ծրագրերում ներգրավել Իրանին և, հասկանալով Ռուսաստանի շահագրգռվածությունը տրանսպորտային այս ծրագրով, նպատակ է հետապնդում համագործակցել՝ առաջ մղելով իր էներգետիկ հնարավորությունները:

[6] Баку и Тегеран наращивают энергообмен, СМИ, http://eurasnews.ru/turtsiya

[7] В Баку завершилась встреча глав МИД России, Ирана и Азербайджана, Комментарии, http://izvestia.ru/news/609100

[8] В Кремле подтвердили, что готовится встреча Россия - Иран - Азербайджан, http://ren.tv/novosti/2016-06-03/v-kremle-podtverdili-chto-gotovitsya-vstrecha-rossiya-iran-azerbaydzhan

Այստեղ վերջինիս համար կարևոր են թե՛ էլեկտրաէներգիայի տարանցման և թե՛ գազի արտահանման հնարավորությունները: Հայտնի է, որ Բաքուն ցանկանում է *TANAP* ծրագրին միացնել նաև Իրանը՝ վերջինի գազն իր կողմից վերահսկվող խողովակաշարով Արևմուտք մղելու համար:

Ադրբեջանի համար կարևոր է նաև եռակողմ այս ձևաչափի միջոցով լուծել իր համար կենսական նշանակություն ունեցող Կասպից ծովի կարգավիճակի հարցը, որը մինչև հիմա կարգավորված չէ Իրանի Իսլամական Հանրապետության հետ: Սա հնարավորություն կտա կարգավորել Կասպից ծովում նավթի արդյունահանման խնդիրը ծովի վիճելի հատվածներում:

Այս ծրագրի իրականացման համար կողմերի միջև կան նաև խորքային հակասություններ՝ պայմանավորված տարածաշրջանում անվտանգության դինամիկայի փոփոխությամբ և Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականությամբ, ինչը լրջորեն վտանգում է նախագծի իրականացումը:

ԿՈՐԵԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՄՈԴԵԼՆԵՐԸ ԵՎ ՀՀ-Ն

Մհեր Սահակյան[*]

Ներկայիս ռազմաքաղաքական լարված իրավիճակում ավելի կարևոր է դառնում ՀՀ-ի կողմից կոնկրետ զարգացման ուղի որդեգրելու հրամայականը: Հարցեր են հնչում, թե որոնք են այն ճանապարհները, որ կարող են նպաստել ՀՀ անվտանգության ապահովմանը, բարդ տարածաշրջանում փակ սահմաններով տնտեսության զարգացմանը: Հետաքրքրական է, որ սոցիալական ցանցերում (Ֆեյսբուք և այլն) հստակ ուրվագծվում է ՀՀ ռազմականացման տեսլականը:

Հանրության մի զգալի հատված վերջին ռազմական գործողություններից հետո հստակ նշում է, որ ՀՀ-ն նույնպես պետք է ձեռք բերի բոլոր այն զինատեսակները, որոնք առկա էին Բաքվի զինանոցում: Փորձ է արվում ընդգծել Ադրբեջանի հետ սպառազինությունների մրցավազքի դուրս գալու կարևորությունը:

Լինե՞լ, թե՞ չլինել հարցի իմաստը տեղավորվում է հետևյալի մեջ. ինչպե՞ս է հնարավոր, մի կողմից, ունենալ արդիական բանակ, իսկ մյուս կողմից՝ զարգացնել տնտեսությունը: Այսինքն՝ այս հարցը պետք է կարդալ հակառակ կողմից՝ հասկանալով, որ առանց զարգացած ու մրցունակ տնտեսության հնարավոր չէ ունենալ ժամանակակից բանակ և ապահովել անվտանգությունը: Որպես ՀՀ զարգացման երկու հնարավոր օրինակ ուսումնասիրենք Կորեական թերակղզու 2 պետությունների՝ Կորեայի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետության (ԿԺԴՀ կամ Հյուսիսային Կորեա) և Կորեայի Հանրապետության (ԿՀ կամ Հարավային Կորեա) օրինակները:

ԿԺԴՀ-ն, թե՛ տնտեսապես, թե՛ ֆինանսապես հետ ընկնելով ԿՀ-ից, գնաց դեպի երկրի ռազմականացումը: Ստեղծվեց հրթիռների արտադրության հզոր համակարգ, որի արտադրանքով ԿԺԴՀ-ն զսպում է ոչ միայն ԿՀ-ին ու սպառնում Ճապոնիային, այլև, մինչև Միավորված Ազգերի Կազմակերպության Անվտանգության խորհրդի (ՄԱԿ ԱԽ) պատժամիջոցները, դրանք վաճառում էր Իրանին, Սիրիային և այլ երկրների: Տարեկան օգուտը՝ $1 մլրդ: 2006թ. ԿԺԴՀ-ն կատարեց միջուկային զենքի առաջին փորձարկումը, որով կոնկրետ ազդա-

[*] Նանջինգի համալսարանի ասպիրանտ:

նշան տվեց, որ ԱՄՆ-ը և ԿՀ-ն զենքի ուժով չեն կարողանա հաջողության հասնել, բայց այս քայլին հետևեցին ՄԱԿ ԱԽ ծանր պատժամիջոցները:

ԿԺԴՀ թե՛ տնտեսությունը, թե՛ հասարակությունը ռազմականացված են: Ծառայում են կանայք ու տղամարդիկ, պարտադիր ծառայությունը տևում է մոտ 5-12 տարի: Երկիրը ղեկավարվում է մեկ կուսակցության՝ Կորեայի բանվորական կուսակցության կողմից: Տնտեսությունը գործում է պետական ապարատի վերահսկողության ներքո, երկրի կարևոր պաշտոնները գտնվում են 20-րդ դարի քաղաքական ու ռազմական գործիչների ձեռքում. բացառություն է երկրի ղեկավարը՝ Կիմ Չըն Ընը, որը փոխարինելու եկավ հորը:

2013թ. ԿԺԴՀ-ի կողմից պաշտոնապես հայտարարված նոր գիծը, նպատակ ունի արդիականացնել միջուկային զինանոցն ու կառուցել մրցունակ տնտեսություն[1]:

Այսինքն՝ ԿԺԴՀ-ն առաջին հերթին կարևորում է բանակի, իսկ հետո՝ տնտեսության զարգացումը: Սակայն տնտեսության զարգացումը, թերևս, անհնար է ներկայիս պատժամիջոցների պայմաններում, որոնք ԿԺԴՀ-ին փաստացիորեն տնտեսական շրջափակման են ենթարկել:

Իհարկե, ՀՀ-ն կարող է հետևել ԿԺԴՀ օրինակին, այն է՝ փակել երկիրը, իշխանությունը հանձնել մեկ կուսակցության, երկիրը տանել դեպի «մեծ» ռազմական դառնալու ճանապարհով՝ զարգացնել ռազմարդյունաբերությունը, բանակի ծառայությունը դարձնել 10 տարի, բանակ տանել նաև կանանց, վերահսկողություն տակ առնել երկրի տնտեսական համակարգը՝ արդյունքում ստանալով երկիր, որտեղ բնակվող մարդիկ կապրեն սոցիալական ոչ բավարար պայմաններում, բայց կունենան հեռահար հրթիռներով ու պաշտպանության համար բավարար միջոցներով օժտված բանակ, որն էլ իր հերթին կապահովի երկրի անվտանգությունը:

ՀՀ-ն ռազմական ճամբարի վերածելու արդյունքում երկրում կմեծանան զինվորականության դերն ու իշխանությունը, պետական ապարատի վերահսկողության տակ գործող տնտեսությունն ի վիճակի կլինի պահել միայն բանակն ու այն սպասարկող հիմնարկները: Կկրճատվեն երկրի այլ բնագավառների վրա ծախսվող գումարները:

Այսինքն՝ ռազմականացման ճանապարհով գնալը կամ սպառազինությունների մրցավազքի մեջ մտնելը, կամ Մեծամորի ատոմակայնի թափոնների

[1] *Միհր Սահակյան,* Ատոմային ռումբը վերադառնում է կամ՝ կորեական թնջուկ, Գլոբուս #4 (49), 2014, http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=12707

միջոցով ատոմային ռումբ ստեղծելը (ինչն առանց գիտական ու տեխնիկական հզոր համակարգի անհնարին է) երկրին կտան որոշակի անվտանգության երաշխիքներ, բայց արդյունքում կստանանք տնտեսապես թերզարգացած, մեկուսացած ու ռազմականացված երկիր…

Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ԿԺԴՀ-ի նման ռազմականացած և «ապահով» երկիրն էլ չի կարող գոյատևել, եթե չլինի Չինաստանի ֆինանսական ու տնտեսական օգնությունը… Այսինքն՝ պետք է գտնել նաև երկիր, որը հետաքրքրված կլինի Հարավային Կովկասում ռազմաբազայի վերածված երկրին ֆինանսավորելով…

Սփյուռքից եկող դրամական հոսքերի միջոցով զենք գնելու վրա նույնպես հույս դնել չի կարելի, քանի որ այս ռեսուրսն անվերջ չէ, մարդիկ կփոխանցեն մեկ անգամ, երկու անգամ, բայց երրորդ անգամ արդեն իրենց համար էլ դժվար կլինի…

Կորեական երկրորդ դասն ու օրինակը կարելի է համարել ԿՀ ճանապարհը: Այն, ի տարբերություն իր անմիջական հարևանի՝ ԿԺԴՀ-ի, ազատականացրեց երկրի տնտեսությունը, որդեգրեց արևմտյան պետականաշինության արժեքները, զարգացրեց գիտությունը: Գիտության վրա ծախսված ահռելի գումարների շնորհիվ ստացված արդյունքներն անմիջականորեն փորձարկելով տնտեսության մեջ՝ կարճ ժամանակում համաշխարհային շուկայում մրցունակ ապրանքներ ստեղծեց:

ԿՀ-ն զարգացած գիտության և արդյունաբերության շնորհիվ (նանոտեխնոլոգիաների արտադրություն, մեքենաշինություն, քիմիական արդյունաբերություն և այլն) ստիպում է, որ հաշվի առնեն իր շահերը: Մեծացնելով տնտեսական կապերը Չինաստանի և Ռուսաստանի հետ, որոնք ԿԺԴՀ հիմնական հովանավորներն են, ԿՀ-ին հաջողվեց ԿԺԴՀ-Չինաստան, ԿԺԴՀ-Ռուսաստան հարաբերությունների մեջ սեպ խրել: Ներկայում թե՛ Պեկինը, թե՛ Մոսկվան ակնհայտ տարբերություն չեն դնում Սեուլի և Փհենյանի միջև, ինչն, իհարկե, ԿԺԴՀ մեկուսացմանն է նպաստում: Իսկ ԿՀ դաշնակիցը՝ ԱՄՆ-ը, Սեուլին մատակարարում է թե՛ սպառազինություն, թե՛ ապահովում է «միջուկային անձրևանոցով»: Այսինքն՝ դաշնակիցը պատրաստ է ապահովել իր այն դաշնակցին, որն ուժեղ է ու հարուստ, ոչ մեկին թույլ և աղքատ դաշնակիցներ պետք չեն…

Ի տարբերություն ԱՄՆ-ԿՀ դաշինքի, ԿԺԴՀ-ի հետ դաշինքն իսկական բեռ է դարձել Չինաստանի համար, և Պեկինում հաճախ են սկսել կասկածի տակ դնել աղքատ ու ռազմականացված Փհենյանի հետ հարաբերությունների կարևորության հարցը…

Երկու Կորեաների համեմատության դեպքում պետք է նաև նշել, որ ԿԺԴՀ-ն հարուստ բնական պաշարներ ունի, իսկ ԿՀ-ն նմանատիպ ռեսուրսներով օժտված չէ…

Այսինքն՝ Հարավային Կովկասում ՀՀ-ն, զարգացնելով գիտությունն ու ստացված արդյունքները տնտեսության մեջ փորձարկելով, կարող է հաջողություն գրանցել, ստացված գումարներով առողջացնել երկրի տնտեսական համակարգը, գնել զենք ու ապահովել անվտանգությունը: ՀՀ-ում Հարավային Կորեայի ոճի բարեփոխումների ի հայտ գալու դեպքում ՀՀ կարելի է վերադարձնել նաև արտերկրում աշխատող բարձրակարգ հայազգի գիտնականներին ու տնտեսության բնագավառում ղեկավարման փորձ ունեցող մասնագետներին, ովքեր կմիացնեն գիտությունն ու արդյունաբերությունը՝ զարգացնելով ՀՀ տնտեսությունը, որն էլ իր հերթին կնպաստի երկրի անվտանգության ամրապնդմանը:

Այսպիսով, ՀՀ-ն նույնպես, ԿՀ-ի նման, չունի բնական հանածոներ, ուստի պետք է հույսը դնի միայն սեփական մարդկանց ինտելեկտի ու գիտության զարգացման շնորհիվ հաջողության հասնելու վրա՝ բնական հանածոներով օժտված ԿԺԴՀ-ի փորձը թողնելով Հարավային Կովկասի՝ նավթով ու գազով օժտված, Արցախից անդին ընկած ռազմատենչ հարևանին:

Հուշագիր հեղինակին

«Գլոբուս» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ՝ նվիրված Հայաստանի և Հայության ռազմաքաղաքական, տեղեկատվական և վերջինիս մեջ ընդգրկված քաղաքակրթական ու հոգևոր անվտանգության խնդիրներին, հայկական համայնքների և տարալեզու-տարադավան հայերի կազմակերպչական անվտանգության հիմնահարցերին:

«Գլոբուս» ամսագրի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «Գլոբուս» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 7 էջը:
2. Առաջին անգամ հոդված ներկայացնելիս պարտադիր կցել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև հեռավորությունը՝ 1.5:
4. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:

Խմբագրություն

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 27.06.2016թ.
Թիվ 4 (73), 2016թ.
Տպաքանակը՝ 150։

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «ԹԱՍԿ» ՍՊԸ տպարանում